«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԻԼԻՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Դիլիջանի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԴՊԲՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԴՊԲՔ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ԴՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 34

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 37

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 39

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 42

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 45

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 47

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 51

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ... 52

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 55

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 59

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

ԴՊԲՔ-ն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով: ԴՊԲՔ-ը Տավուշի մարզի միակ պետական բժշկական ուսումնական հաստատությունն է, որը իր էական դերակատարությունն ունի տարածաշրջանում բժշկության ոլորտի միջին մասնագիտական, պրակտիկ հմտություններով և կարողություններով մասնագետների պատրաստման գործում: Քոլեջը իրավասու է ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական կրթական ծրագրեր:

Քոլեջում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) համահունչ են հաստատության առաքելությանը և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին (այսուհետ՝ ՊԿՉ): Փորձագիտական խումբը առավել մանրամասն դիտարկել է մոդուլային ‹‹Ատամնատեխնիկական գործ›› և ‹‹Դեղագործություն›› ՄԿԾ-ները: ‹‹Քույրական գործ›› կրթական ծրագիրը ևս մոդուլային ուսուցման անցման փուլում է գտնվում: ՄԿԾ-ներում կատարված է տեսական, գործնական և պրակտիկայի ժամերի հստակ տարանջատում, նաև ներառված են խորհրդատվության ժամեր: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են ՀՀ այլ բժշկական ՄՈՒՀ-երի ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից տրամադրվող ՄԿԾ-ներին, որը կարող է նպաստել ուսանողների և դասախոսների շարժունակությանը: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի ծրագրերի համադրման հիման վրա ուսանողների և դասախոսական կազմի շարժունությունն ապահովող մեխանիզմներ: Փորձագիտական խմբի կողմից կատարված դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ՊԿՉ-ները և ՄԿԾ-երը համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) 5-րդ մակարդակի պահանջներին, սակայն քոլեջը չունի ՄԿԾ-երի վերջնարդյունքները ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխանեցնելու համար մշակված համապատասխան քարտեզագրումներ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ քոլեջի դասախոսական կազմը օգտագործում է ՄԿԾ-ներից ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների լայն ընտրանի, ինչպես նաև առկա են ‹‹Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման համակարգի›› կանոնակարգ-ընթացակարգեր, սակայն գնահատման միջոցները կանոնակարգված չեն, բացակայում են գնահատման չափանիշները և բաղադրիչները: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄԿԾ-ների առարկաներից շատերը դասավանդում են փորձառու բժիշկ-մանկավարժներ, և պրակտիկ և գործնական դասերը հիմնականում իրականցվում են

[1] Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Դիլիջան քաղաքի բժշկական հաստատություններում: Նշված հանգամանքը միանշանակ նպաստում է կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Այս մասին են վկայում նաև փորձագիտական խմբի գործատուների հետ հանդիպման ժամանակ քննարկումները, որոնք միանշանակ մատնանշում էին թե՛ քոլեջի կարևոր առաքելությունը և թե՛ ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների բավարար մակարդակը: Գործատուները հատկապես կարևորում են դեղագործական բաժնի բացումը, որի շրջանավարտները տարածաշրջանում հեշտությամբ մասնագիտական աշխատանք են գտնում:

Համավարակով պայմանավորված՝ քոլեջում ուսուցումը որոշակի փուլերով իրականացվել է առցանց: Փորձագիտական խմբի անդամները իրականացրել են առցանց դասալսումներ: Պարզվեց, որ քոլեջի առկա ռեսուրսները չեն կարող ապահովել առցանց դասերի արդյունավետ իրականացումը. բացակայում է առցանց դասավանդման միասնական հարթակը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբն արձանագրել է առցանց դասապրոցեսի արհեստավարժ իրականացման մասնակի դեպքեր՝ սահիկաշարերի, խաչբառերի, տեսաֆիլմերի, ուսանողների պատրաստած գործնական հմտությունների տեսանկարահանումների և այլ տնային հանձնարարականների ներկայացմամբ:

Քոլեջում առկա է ուսանողների գիտելիքների գնահատման և բողոքարկման կանոնակարգ. պետական ամփոփիչ ատեստավորումը կատարվում է ըստ սահմանված կարգի՝ հատուկ հանձնաժողովի միջոցով, որում ներգրավված են դասախոսական կազմի ներկայացուցիչներ և մասնագիտական ոլորտի արտաքին շահակիցներ (գործատուներ):

Առկա մարտահրավերների պարագայում (ցածր վարձատրություն, պատերազմով և համավարակով պայմանավորված բազմաթիվ խնդիրներ, քոլեջի անմխիթար ռեսուրսներ), փորձագիտական խումբը փաստում է, որ քոլեջում դասավանդում է արհեստավարժ, մարդկային բարձր հատկանիշներով օժտված դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ: Վերջինիս մոտ 70%-ը բժիշկ-դասախոսներ են, այդ թվում նաև գործատուներ: Նշված հանգամանքը, անշուշտ նպաստում է որակյալ մասնագետների պատրաստմանը: Քոլեջում գործում են դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն և ընթացակարգերը: Սակայն դասախոսական կազմի ընտրությունը չի իրականացվում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներով: Քոլեջում բացակայում է դասախոսական կազմի մասնագիտական և այլ վերապատրաստումների միասնական մոտեցումը: Իրավիճակը փոքր ինչ մեղմվում է բժիշկ-դասախոսների ներգրավմամբ, ովքեր իրենց ոլորտում անցնում են մասնագիտական վերապատրատումներ: Քոլեջում առկա է դասախոսական կազմի պարգևատրման և նյութական խրախուսման ընթացակարգ, սակայն սակավ ֆինասական միջոցների պատճառով անձնակազմի նյութական խրախուսում հազվադեպ է իրականացվում:

Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջի շենքային պայմանները անմխիթար վիճակում են, մասնավորապես առկա են հետևյալ խնդիրները. կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայություն, արդիականությունը կորցրած սարքավորումների առկայություն, լաբորատորիաների արդիականացման, դահլիճի բարեկարգման, հանրակացարանի, համակարգչային կաբինետի վերազինման, համակարգչային լսարանների, գրադարանային ֆոնդի հագեցման, հատուկ կարիքներ ունեցող անձանց

կարիքների համար անհրաժեշտ պայմանների և այլնի ապահովում և այլն: Այս պարագայում ևս դասախոսական կազմը փորձում է շրջանցել որոշ խնդիրներ, օրինակ, լսարաններում համակարգչային տեխնիկայի բացակայությունը լրացվում է դասավանդվող նյութի պաստառներով և այլ մեթոդներով: Չնայած նրան, որ Դիլիջանի ԲԿ-ն և այլ բուժհաստատություններ բազաներ են հանդիսանում ուսանողների գործնական և պրակտիկ դասընթացների կազմակերպման համար, այնուամենայնիվ, քոլեջը պետք է ապահովված լինի իրեն անհրաժեշտ վերոնշյալ սեփական ռեսուրսներով: Հարկ է նշել, որ քոլեջի ղեկավարությունը խիստ անհանգստացած է ստեղծված իրավիճակի կապակցությամբ. ֆինանսական խնդիրները կապում է ուսանողների թվի նվազման հետ, սակայն նաև գիտակցում է, որ առաջիկայում պետք է ձեռնարկել լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ:

Քոլեջի առաքելության իրականացման համար մշակված է հնգամյա զարգացման ծրագիր, որտեղ սահմանված են զարգացման նպատակները և խնդիրները: Ձևակերպված խնդիրներն ընդհանուր առմամբ ուղղված են սահմանված ռազմավարական նպատակների իրագործմանը: Թեպետ քոլեջում մշակվում են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, սակայն բացակայում են դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ: Հատկանշական է, որ ԴՊԲՔ-ը կարևորում է ներքին և արտաքին հաշվետվողականությունը: Մշակված են նաև առաքելության ու նպատակների իրականացման, արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատմանն ու բարելավմանն ուղղված որոշ մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք սակայն կարիք ունեն արդյունքների գնահատման համակարգի ներդրման, ինչպես նաև խնդիրների լուծման մեջ արտաքին շահակիցների մասնակցության ակտիվացման:

ԴՊԲՔ-ի կոլեգիալ կառավարման մարմինը քոլեջի խորհուրդն է, որը տարվա ընթացքում չորս անգամ գումարում է նիստ: Բացի կառավարման Խորհրդից, քոլեջում գործում են նաև այլ խորհրդակցական մարմիններ: Քոլեջի կառավարման համակարգը ապահովված չէ բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով: Առկա ռեսուրսները դեռևս բավարար չեն նաև կրթական և այլ նպատակների արդյունավետ իրականացման համար: Ընդհանուր առմամբ, քոլեջում որոշումների կայացման գործընթացը համապատասխանում է կառավարման էթիկայի սկզբունքներին: Փորձագիտական խումբն արձանագրել է, որ ԴՊԲՔ–ն սահմանել է իր արտաքին և ներքին շահակիցների գործունեության վրա ազդող հնարավոր գործոնները, սակայն դեռևս չունի այդ գործոնների ուսումնասիրության կանոնակարգված մեխանիզմ: Դեռևս առկա չեն նաև քոլեջի խորհրդի կողմից հաստատված՝ զարգացման ծրագրին ուղղված մշտադիտարկման ընթացակարգեր: Ավելին, քոլեջի կողմից չի ներկայացվել իր նախորդ զարգացման ծրագրի կատարողականի վերլուծություն, ձեռքբերումների և խոչընդոտների գնահատում:

Հարկ է նշել, որ քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է իր ձևավորման փուլում. 2021թ. ապրիլի 15-ից քոլեջում հրամանագրվել է որակի պատասխանատու, սակայն մինչ այժմ քոլեջը չունի որակի ապահովմանն ուղղված կանոնակարգեր և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեպետ իրականացվել են որակի ապահովմանն ուղղված գործընթացներ, սակայն դրանց արդյունավետության գնահատման, իրականացված քաղաքականության վերանայման աշխատանքներ չեն կատարվել, ինչը պայմանավորված է

ինչպես համապատասխան մեխանիզմների և գործիքակազմի, այնպես էլ համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայությամբ:

Դրական է այն փաստը, որ ԴՊԲՔ-ում առկա են նաև ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմեր.յուրաքանչյուր ուսումնական տարվա նախաշեմին տարածվում է մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն և իրականացվում է ընդունելություն ըստ սահմանված կարգի. մասնավորապես կատարվում են այցելություններ տարածաշրջանի դպրոցներ, կազմակերպվում բաց դռների օրեր, տպագրում և տարածում բուկլետներ և այլն: Այդուհանդերձ, ԴՊԲՔ-ի էլեկտրոնային կայքի բացակայությունը և գործող ֆեյսբուքյան էջի ոչ բավարար ակտիվությունը սահմանափակում են քոլեջի կապը արտաքին շահակիցների հետ: Դրական է, որ քոլեջում գործում է ուսանողական խորհուրդ: Ուսանողները քոլեջի կառավարման համակարգում բավարար չափով ներգրավված են տարբեր որոշումների կայացման գործընթացներում, նրանց օժանդակելու նպատակով գործում են վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, ինչպես նաև առկա են նրանց կրթական կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ: Սակայն, այցի ընթացում պարզ դարձավ, որ ուսանողները, գիտակ լինելով քոլեջի ոչ բավարար ֆինանսական միջոցների մասին, պահանջատեր չեն, չեն բարձրաձայնում իրենց հիմնական խնդիրները և շատ անգամ, բավարարված են առկա ռեսուրսներից: Այսուհանդերձ, արհեստավարժ, հոգատար և նվիրյալ դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ հնարավորության սահմաններում աջակցում են ուսանողներին՝ լրացուցիչ դասերի կամ խորհրդատվության տրամադրման և այլ մոտեցումներով:

Քոլեջում արդյունավետորեն գործում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների պատասխանատու մարմինը՝ կարիերայի ստորաբաժանումը: Այն, համագործակցելով թե՛ ուսանառղական խորհրդի և թե՛ գործատուների հետ, մասնակցում է ուսանողների կարիքների վերհանմանը, խորհրդատվություն տրամադրում մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում:

Քոլեջը զարգացման հնգամյա ծրագրում նախատեսել է իրականացնել «հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեություն»: Սակայն, փորձագիտական խումբը չի արձանագրել ամբիոնների հիմնական ուղղվածության շրջանակներում հետազոտական ծրագրերի առկայություն: Քոլեջը խիստ կարիք ունի ռեսուրսների համալրման, լաբորատորիաների հագեցման, ինչպես նաև լաբորատոր և գործնական աշխատանքների իրականացման համար ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստման, ուսանողների հետազոտավերլուծական աշխատանքների միասնական համակարգի ներդրման: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը արձանագրել է, որ ներդրված են ուսումնառության և հետազոտական գործունեության փոխկապակցվածության, ուսանողների վերլուծական մտածողության զարգացման որոշ մեխանիզմներ, որոնք դեռևս զարգացման կարիք ունեն: Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ քոլեջում առկա է ներքին հաշվետվողականության համակարգ: Քոլեջում գործում են հասարակությանը գիտելիքների փոխանցման որոշ մեխանիզմներ: Սակայն, հետադարձ կապը շրջանավարտների և գործատուների հետ համակարգված բնույթ չի կրում: Քոլեջի պաշտոնական կայքի բացակայության պատճառով քոլեջում իրականացվող գործընթացների

վերաբերյալ տեղեկատվությունը, ներկայացված հաշվետվությունները հասանելի չեն քոլեջի ներքին և արտաքին շահակիցներին: Թեև քոլեջում գործում է կարիերայի կենտրոնը, որը համագործակցում է տարածքային զբաղվածության կենտրոնի և գործատուների հետ, այնուամենայնիվ փորձագիտական խմբի հանդիպումներից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԴՊԲՔ-ում չեն իրականացվում արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող գործողություններ: ՄՈՒՀ-ը չի տրամադրում ռեսուրսներ միջազգայնացմանն ուղղված աշխատանքների համար, բացակայում է ՀՀ-ում մասնաճյուղեր և կառույցներ ունեցող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու նախաձեռնողականությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների և դասախոսական կազմի մեծ մասի օտար լեզվի իմացության մակարդակը բավարար չէ, ավելին, քոլեջում առկա չեն ուսանողների և դասախոսների օտար լեզուների իմացության կատարելագործմանն ուղղված հստակ մեխանիզմներ, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ միջազգայնացման գործընթացի համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Տարածաշրջանում կարևոր առաքելության դրսևորում՝ բժշկական ոլորտի որակյալ մասնագետների պատրաստմամբ:
2. Քոլեջի առաքելությանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՄԿԾ-ներ:
3. Արհեստավարժ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ՝ բժիշկ-դասախոսների ներգրավմամբ:
4. Մոտիվացված ուսանողական կազմ:
5. Տարածաշրջանի բժշկական հաստատությունների բազայից օգտվելու հնարավորություն:
6. Որակի ներքին ապահովման համակարգի մեկնարկ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական կառավարման մշակույթի բացակայություն:
2. Ֆինանսական այլընտրանքային աղբյուրների որոնման պասիվություն:
3. Քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության գործընթացների ՊԻԳԲ շրջափուլի անկատարություն:
4. Առաքելության, ռազմավարական նպատակների իրականացման ընթացքում արտաքին շահակիցների պասիվ ներգրավվածություն:
5. Դասախոսական և վարչական անձնակազմի մասնագիտական և այլ վերապատրաստումների միասնական համակարգի բացակայություն:
6. Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի խրախուսման համակարգի անկատարություն:
7. Հետազոտական/վերլուծական և ուսումնական գործընթացների փախկապակցվածության միասնական համակարգի բացակայություն:
8. Շենքային պայմանների և այլ ռեսուրսների անմխիթար վիճակ, արդիականությունը կորցրած լաբորատորիաներ, լսարաններ, գրադարան և այլն:
9. Ուսանողների և դասավանդողների շարժունության մեխանիզմների բացակայություն:
10. Պաշտոնական կայքի բացակայություն և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման պասիվություն:
11. Որակի ներքին ապահովման համակարգի անկատարություն:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել Զարգացման ծրագիրը՝ հաստակեցնելով քոլեջի առաքելությունը, դրան հասնելու ճանապարհային քարտեզը, որը համահունչ կլինի քոլեջի մարդկային և ֆինանսական ռեսուրսներին:
2. Ներդնել ռազմավարական պլանավորման գործընթացներ՝ մշակելով բոլոր բաժինների համար պլաններ համահունչ քոլեջի ռազմավարական ուղղություններին:
3. Մշակել քոլեջի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործիքակազմ/ցուցիչներ և սահմանել իրագործման հստակ ժամանակացույց:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատում և հստակեցնել ինչպես խորհրդակցական մարմինների, այնպես էլ կառուցվածքային ատորաբաժանումների համագործակցության մեխանիզմները:
5. Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների ստեղծման հետ միաժամանակ մշակել դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:
6. Ներդնել քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման մեխանիզմներ:
7. Կանոնակարգել արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատման, հարցումների արդյունքների վերլուծության մեխանիզմները և որոշումների կայացման հիմքում դնել հավաքագված և մշակված տվյալների վերլուծությունը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8.Մշակել ՄԿԾ-ների վերջնարդյունքները ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխանեցման մատրիցաներ և ուսումնական գործընթացում ներդրման մեխանիզմներ:

9. Հստակեցնել և կանոնակարգել տեսական և գործնական հմտությունների գնահատման գործիքակազմ:

10. Մշակել և ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ակտիվ ներգրավումը ապահովող արդյունավետ մեխանիզմներ:

11.Մշակել և կիրառել ՄԿԾ-ներում ուսումնառության և հետազոտավերլուծական գործունեության փոխկապակցման միասնական մեխանիզմներ:

12. Հստակեցնել առցանց դասավանդման գործընթացի կազմակերպման մեթոդաբանությունը և գործարկել ուսումնառության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողները

13.Մշակել և ներդնել լրացուցիչ պարապունքների իրականացման կանոնակարգ և ժամանակացույց ուսանողների հետ արդյունավետ աշխատանքներ տանելու նպատակով, ինչպես նաև մշակել լրացուցիչ պարապունքների կազմակերպման և խորհրդատվության տրամադրման արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

14. Ակտիվացնել ՈՒԽ գործունեությունը՝ նպատակաուղղելով ուսանողների իրավունքների պաշտպանությանը։

15.Հստակեցնել ուսանողների կրթական և այլ կարիքների գնահատման, արդյունքների վերլուծության գործիքակազմը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Հստակեցնել յուրաքանչյուր կրթական ծրագրի համար դասախոսական կազմի որակներին ներկայացվող պահանջները:

17. Ներդնել և իրագործել դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման կանոնակարգ և անձնակազմի խրախուսման արդյունավետ համակարգ:

18.Ներդնել դասախոսների կատարելագործմանն (մասնագիտական, օտար լեզուներ, համակարգչային հմտություններ, դասավանդման նորագույն մեթոդներ) ուղղված միասանական համակարգ:

19.Ներդնել երիտասարդ կադրերի համալրման շարունակական մեխանիզմներ:

20.Կայունության ապահովման նպատակով՝ ձևավորել դասախոսական կազմի ռեզերվ:

Հետազոտությունը և զարգացումը

21.Բոլոր մասնագիտական մոդուլներում ներդնել ուսանողների հետազոտական և վերլուծական միտքը զարգացնող միասնական մեխանիզմ:

22. Ստեղծել ուսանողների պորտֆոլիոներ, որտեղ կհավաքագրվեն ուսանողի վերլուծական աշխատանքները:

23.Մշակել և ներդնել ուսանողների հետազոտական/վերլուծական հանձնարարականների գնահատման սանդղակներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

24.Մշակել և գործարկել այլընտրանքային ֆինանսական միջոցների ձեռքբերման ռազմավարություն:

25.Համալրել և արդիականացնել մասնագիտական և բնագիտական լաբորատորիաները, թարմացնել շենքային պայմանները և գույքը:

26.Ներդնել էլեկտրոնային ներքին փաստաթղթաշրջանառության համակարգ:

27.Ստեղծել պայմաններ հատուկ կարիքներով ուսանողների և անձնակազմի համար:

Հասարակական պատասխանատվությունը

28.Մշակել և ներդնել հաշվետվողականության միասնական համակարգ և հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմներ։

29.Ստեղծել շրջանավարտների՝ պարբերաբար թարմացվող տվյալների բազա, մշակել շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման արդյունավետ մեխանիզմներ:

30.Հստակեցնել կրթության որակի ապահովման համակարգի և կարիերայի կենտրոնի փոխգործակցության շրջանակը:

31.Ստեղծել և գործարկել քոլեջի պաշտոնական կայքէջ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

32.Մշակել և իրագործել ՄՈՒՀ-ի միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման ապահովմանն ուղղված քաղաքականություն։

33.Ներդնել դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության բարձրացման մեխանիզմներ:
34.Նպաստել դասախոսների կողմից տեղական և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանը և ուսումնական գործընթացում ներդրմանը:
35.Համագործակցել նմանատիպ ՄՈՒՀ-երի հետ՝ ուսանողների և դասախոսների շարժունությունը, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակումն ապահովելու համար:
36.Ներդնել տեղական և միջազգային դրամաշնորհների, ֆինանսավորում ենթադրող մրցույթների դիմում-հայտերի մշակման գործընթացներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

37. Մշակել որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, հստակեցնել որակի ապահովման համակարգի գործունեության շրջանակը:
38.Ապահովել ՈՆԱ համակարգի ինքնավարությունը, հստակեցնել որակի ապահովման պատասխանատուի հաշվետվողականության մեխանիզմները:
39.Մշակել և/կամ հստակեցնել արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատման մեխանիզմները, հստակեցնել արդյունքների վերլուծության և օգտագործման մեխանիզմները:
40.Մշակել քոլեջի տարբեր ստորաբաժանումներում առկա լավագույն փորձի բացահայտման և տարածման մեխանիզմներ, ներդնել որակի ապահովման գործընթացների լուսաբանման և գործընթացների բարելավման նպատակով հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ:

_____

Աննա Փոլադյան

Ամսաթիվ՝ 13.01.2022

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Աննա Փոլադյան՝** Երևանի պետական համալսարանի, Կենսաբանության ֆակուլտետի, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:

2. **Անի Հակոբյան՝** ՃՇՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնի ավագ մասնագետ: Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվող GeoTAK նախագծի որակի ապահովման հայաստանյան պատասխանատու:

3. **Անահիտ Մարտիրոսյան՝** ԹԻՎ 20 Պոլիկլինիկա առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերություն, մանկաբարձության և գինեկոլոգիայի բաժանմունք:

4. **Սպարտակ Սիմոնյան՝** Երևանի Հենակետային բժշկական քոլեջի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Ռոզա Բաբայանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԴՊԲՔ-ն դիմել է ՈԱԱԿ (12.02.2021)՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի, ԴՊԲՔ-ի և ԿԳՄՍՆ-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Քանի որ ԴՊԲՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ–ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ուսումնական հաստատության հետ՝

նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացմանը և հավատարմագրման գործընթացին: Փետրվար ամսին ԴՊԲՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո քոլեջն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: ՈԱԱԿ համակարգողները այդ ընթացքում քոլեջի աշխատակիցներին ուղղորդել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել, և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին 2021 թվականի հուլիսի 10-ին իրականացրել են առցանց այց ԴՊԲՔ-ում:

ԴՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 19.07.2021թ.-ի ն : Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 14 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից։ Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է 1 աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատակցի աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը որոշ դեպքերում հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

ԴՊԲՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,

2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,

3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,

4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է երկու զուգահեռ հանդիպումներ, զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին երկու մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախնական այց

Հաշվի առնելով ԴՊԲՔ-ի հեռավորությունը մայրաքաղաքից՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021 թ. նոյեմբերի 15-ից նոյեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ 14.11.2021 թ.-ին փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում

[2] Փորձագիտական այցի ժամանակացույց

ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԴՊԲՔ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է ԴՊԲՔ տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների[3] և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, ռեսուսրների դիտարկման և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 24-ին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է ԴՊԲՔ դեկտեմբերի 24-ին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը ԴՊԲՔ-ն ուղարկել է ՈԱԱԿ 05.01.2022-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ քոլեջը չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 13.01.2022-ին:

Ռոզա Բաբայան, գործընթացի համակարգող

13 հունվարի, 2022

[3] Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեսուրսներ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Դիլիջանի պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1961 թ. և անվանվել «Դիլիջանի բժշկական ուսումնարան»: 1996 թ.-ին վերանվանվել է «Դիլիջանի բժշկական ուսումնարան» փակ բաժնետիրական ընկերություն: 2004 թ.-ին վերանվանվել է «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ: Իր գործունեության տարիների ընթացքում Դիլիջանի պետական բժշկական քոլեջը տվել է բազմաթիվ որակյալ շրջանավարտներ, ովքեր հաջողությամբ աշխատում են հանրապետության և արտերկրի բուժհաստատություններում:

Կրթություն. Քոլեջում իրականացվում են միջին մասնագիտական բժշկական կրթական ծրագրեր՝

1. Քույրական գործ

2. Մանկաբարձական գործ

3. Դեղագործություն

4. Դեղագործություն /հեռակա/

5. Ատամնատեխնիկական գործ

6. Բուժական կոսմետոլոգիա

Քոլեջի աշխատանքները իրականացվում են 5 առարկայական ամբիոնների կողմից: Գործում են առարկայական խմբակներ մասնագիտական և հանրակրթական առարկաներից:

Դասապրոցեսը կազմվում է 5-օրյա աշխատանքային շաբաթով, շաբաթվա ծանրաբեռնվածությունը 36ժ:

Պրակտիկ ուսուցումը կազմակերպվում է քոլեջում և բազաներում: Ուսանողներին դասավանդող բազաների բուժաշխատողներին քոլեջի կողմից մշտապես մեթոդական օգնություն է ցույց տրվում դասապրոցեսը անհրաժեշտ մակարդակով իրականացնելու համար:

Հետազոտություն. Քոլեջի հետազոտական գործունեության հիմնական նպատակներից է ուսումնառողների մոտ ձևավորել քննադատական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ: Համադրելով, հավաքագրելով, մշակելով և վերլուծելով իրենց ոլորտի /մասնագիտության/ քանակական, որակական տվյալները, դրանցում ցուցաբերել ստեղծագործական և նորարական մոտեցումներ:

Միջազգայնացում. Քոլեջի խնդիրներից է ինտեգրվել և դառնալ միջազգային կրթական համակարգի ակտիվ անդամներից մեկը: Դրա համար անհրաժեշտ է համարում շարունակել քոլեջի արտաքին կապերի զարգացումը, էլ ավելի մեծացնել գործընկերային կապերը:

Որակի ապահովում. Որակի ապահովման գործընթացներ քոլեջում մշտապես իրականցվել են, սակայն կոորդինացված և հստակ քաղաքականություն չի ունեցել: Մշակման փուլում են որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը: Որակի ապահովման գործընթացներում հնարավորինս ներգրավված են ներքին և արտաքին շահակիցները: Որակի ապահովման աշխատանքների ուղղորդման համար իրականացվում են խորհրդատվական դասընթացներ և աշխատանքներ քոլեջի աշխատակիցների հետ:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն ԴՊԲՔ առաքելությունը սահմանվում է հիմնադիր փաստաթղթի՝ կանոնադրության մեջ (հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013 թ. հոկտեմբերի 11-ի հրամանով): Կանոնադրության II-րդ բաժնում, որը վերնագրված է «Քոլեջի գործունեությունը», մանրամասն ներկայացված է քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Մասնավորապես 13-րդ կետով սահմանվում է քոլեջի գործունեության առարկան՝ հետևյալ ձևակերպմամբ. «Քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Քոլեջը կարող է Հայաստանի հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական կրթական ծրագրեր»: Կանոնադրության մյուս բաժիններում որևէ կերպ չի սահմանվում քոլեջի գործունեության առաքելությունը:

Ինքավերլուծության համաձայն քոլեջի առաքելությունն է՝ պատրաստել միջին մասնագիտական կրթությամբ տարածաշրջանի բժշկության ոլորտի համար աշխատաշուկայում մրցունակ, պրակտիկ հմտություններով և կարողություններով որակյալ մասնագետներ՝ համաձայն մշակված զարգացման ծրագրի:

Քոլեջի զարգացման հնգամյա ծրագրում, որը հաստատվել է քոլեջի կառավարման խորհրդի 17.11.2017թ. նիստում, ներկայացվում են քոլեջի ուժեղ և թույլ կողմերը, սահմանվում են քոլեջի գործունեության հիմնական խնդիրները, սակայն այս փաստաթղթում ևս առկա չէ քոլեջի գործունեության առաքելության հստակ ձևակերպում: Քոլեջի զարգացման հնգամյա ծրագրում սահմանված են ռազմավարական նպատակները (թվով 3) և խնդիրները (թվով 25) : Նախանշված ռազմավարական նպատակներից առաջինը ներկայացնում է քոլեջի գործունեության հիմնական ուղղությունները և համահունչ է քոլեջի գործունեության առաքելության վերոնշյալ ձևակերպումներին. «Զարգացման քաղաքականությունը պետք է ուղղված լինի շրջանավարտների ինքնության գիտակցմանն ու արժևորմանը նպաստող որակների զարգացմանը, աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստմանը, որի համար անհրաժեշտ է համագործակցել սոցիալական գործընկերների հետ, ուսումնասիրել աշխատաշուկան՝ անհրաժեշտ մասնագետների պատրաստման հարցում»: Ըստ ինքնավերլուծության քոլեջը կարևորում է նպատակների և առաքելության իրականացման արդյունքների արդյունավետ գնահատման համար շահակիցների մասնակցությունը ոչ միայն զարգացման ծրագրի մշակման, այլև որոշումների ընդունման գործընթացին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի՝ զարգացման ծրագրի մշակման նպատակով չի ստեղծվել հատուկ հանձնաժողով, սակայն քննարկումների միջոցով՝ քոլեջի ներքին շահակիցների կողմից կազմվել է զարգացման ծրագրի նախագիծ, որը ներկայացվել է Քոլեջի խորհրդի հաստատմանը:

Քոլեջի զարգացման հնգամյա ծրագրում ձևակերպված թվով 25 խնդիրներն ընդհանուր առմամբ ուղղված են սահմանված ռազմավարական նպատակների իրագործմանը, սակայն չեն արտացոլում դրանց իրագործման համար անհրաժեշտ ճանապարհային քարտեզը: Քոլեջը չի սահմանել ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործման համար պատասխանատու մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԴՊԲՔ-ն դեռևս ոչ մի հիմնարար փաստաթղթում հստակ չի ձևակերպել իր գործունեության առաքելությունը: Քոլեջն իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրեր ՈԱՇ 5-րդ մակարդակին համապատասխան և ուսումնական գործընթացը կազմակերպելիս առաջնորդվում է համապատասխան մասնագիտությունների կրթական չափորոշիչներով:

Քոլեջի Կանոնադրությամբ և առանձին կանոնակարգերով սահմանվում են քոլեջի հիմնական արտաքին և ներքին շահակիցները: Ըստ ինքնավերլուծության քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կառավարման մարմիններում և մշտապես կարծիքներ հայտնելու, առաջարկություններ ներկայացնելու հնարավորություն ունեն: Մշակված է Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականություն: Վերջինս սահմանում է գնահատման քաղաքականության նպատակը և խնդիրները, ընթացակարգը և մշակման, ներդրման և իրականացման պատասխանատուներին: Վերոնշյալ փաստաթղթով չեն սահմանվում քոլեջի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման պատասխանատու ստորաբաժանումը/խորհրդակցական մարմինը, գործիքակազմը և ժամանակացույցը:

Միևնույն ժամանակ, քոլեջի ինչպես նախորդ, այնպես էլ գործող ռազմավարության՝ հնգամյա զարգացման ծրագրի համար մշակված չեն ռազմավարական նպատակների գնահատաման ցուցիչներ: Ռազմավարական նպատակների և խնդրների սահմանման ժամանակ չեն գործել արտաքին և ներքին շահակիցների ներգրավվման հստակ մեխանիզմներ: Տարբեր ստորաբաժանումների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվություններում, ինչպես նաև տնօրենի կողմից ներայացվող հաշվետվության մեջ անդրադարձ չի արվում ռազմավարական նպատակների իրագործմանը և չեն վերլուծվում իրականացման շեղումները:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը փորձ է կատարել իրականացնելու ռազմավարական պլանավորում և կարևորում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարական պլանավորման գործընթացին: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի հիմնարար փաստաթղթերում առկա չէ քոլեջի առաքելության հստակ ձևակերպում: Առաքելության հստակեցումը կանոնադրության մեջ և Զարգացման ծրագրում կնպաստի քոլեջի զարգացման ուղղությունների հստակեցմանը և շահակիցների կողմից միատեսակ ընկալմանը:

Քոլեջն ի սկզբանե ստեղծվել է բժշկական ուղղվածության միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով, որի համար ունի բավարար ներուժ: Քոլեջի արտաքին և ներքին շահակիցները կարևորում են ՄՈՒՀ-ի՝ որպես տարածաշրջանում

բժշկական կրթական ծրագրեր իրականացնող միակ ուսումնական հաստատություն դերը: Քոլեջն իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրեր ՈԱՇ 5-րդ մակարդակին համապատասխան և ուսումնական գործընթացը կազմակերպելիս առաջնորդվում է համապատասխան մասնագիտությունների կրթական չափորոշիչներով՝ համալրելով տարածաշրջանի միջին մասնագիտական բժշկական ոլորտի աշխատաշուկան:

Քոլեջի կանոնադրությամբ և այլ հիմնարար փաստաթղթերով սահմանվում են արտաքի և ներքին շահակիցների հիմնական խմբերը և քոլեջը, ընդհանուր առմամբ կարևորում է նրանց ներգրավումը քոլեջի առաքելության իրականացմանը: Քոլեջում շահակիցների կարիքների գնահատման աշխատանքները կանոնակարգման փուլում են գտնվում: Փորձագիտական այցի ժամանակ տարբեր շահակիցների, մասնավորապես Քոլեջի խորհրդի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների արդյունքների հիման վրա փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները սահմանելիս արտաքին շահակիցների ներգրավումը թույլ է եղել, հետևաբար քոլեջի առաքելությունից բխող մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակությունը ամբողջությամբ չի արտացոլում արտաքին շահակիցների կարծիքները, կարիքները, առաջարկություններն ու դիտարկումները: Ինչպես քոլեջի կառավարման համակարգի ներկայացուցիչները, այնպես էլ քոլեջի ներքին և արտաքին այլ շահակիցներ արժևորում են քոլեջի դերը տարածաշրջանի աշխատաշուկայի համալրման առումով:

Թեև ՄՈՒՀ-ն իրականացնում է գործողությունների պլանավորում, առկա են առաքելության իրականացմանը միտված երկարաժամկետ (5-ամյա զարգացման ծրագիր) և կարճաժամկետ (տարեկան գործողությունների պլան) պլաններ, սակայն ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ պլաններում բացակայում են առաջընթացի գնահատման, խոչընդոտների բացահայտման և հաղթահարման մեխանիզմները: Բացի դրանից, ներկայացված պլաններով չեն սահմանվում նաև յուրաքանչյուր գործողության իրականացման համար պատասխանատու անձինք և/կամ ստորաբաժանումները, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործման համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ քոլեջը առաջին անգամ փորձ է կատարել իրականացնելու ռազմավարական պլանավորում, մշակել է 5-ամյա զարգացման ծրագիր, ներքին և արտաքին շահակիցները գնահատում և կարևորում են ՄՈՒՀ-ի դերը տարածաշրջանում համապատասխան մասնագետներով աշխատաշուկան համալրելու հարցում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԴՊԲՔ-ը համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն:

ԴՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Համաձայն ինքնավերլուծության քոլեջի կառավարումն իրականացվում է «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված քոլեջի կանոնադրության համապատասխան:

Ըստ Կանոնադրության ԴՊԲՔ կոլեգիալ կառավարման մարմինը Քոլեջի խորհուրդն է:

Կանոնադրության համաձայն, քոլեջի կառավարման համակարգը սահմանվում է լիազորված մարմնի կողմից: Քոլեջի տնօրենը, օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և Կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է քոլեջի ընթացիկ գործունեությունը: Քոլեջի կառուցվածքը և ստորաբաժանումների իրավասությունը սահմանում է քոլեջի տնօրենը:

Բացի կառավարման մարմին հանդիսացող Խորհրդից, քոլեջում գործում են նաև հետևյալ խորհրդակցական մարմինները.

1. Տնօրինական խորհուրդ,
2. Մանկավարժական խորհուրդ,
3. Ուսումնամեթոդական խորհուրդ:

Ընդհանուր առմամբ քոլեջին բնորոշ է ուղղահայաց կառավարման մոդելը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի խորհրդի ներկայացուցիչները և կառավարման օղակի այլ ներկայացուցիչներ արդյունավետ են համարում քոլեջի ներկայիս կառուցվածքը: Քոլեջի կազմակերպական կառուցվածքի սխեման արտահայտում է կառուցվածքային ստորաբաժանումների ուղղաձիգ հաշվետվողականությունը, սակայն չի արտահայտում կառուցվածքային ստորաբաժանումների միջև հորիզոնական կապը: Քոլեջի տնօրենի ենթակայության ներքո են գործում քոլեջում ստեղված բոլոր ներկայացուցչական և խորհրդակցական մարմինները, ինչպես նաև վարչական ստորաբաժանումները: Ուսումնական գործընթացների կազմակերպումը և վերահսկումը իրականացվում է տնօրենի ուսումնամեթոդական աշխատանքների գծով տեղակալը:

Վերոնշյալ խորհուրդները և ստորաբաժանումները ունեն քոլեջի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգեր, որոնք առկա են քոլեջում, սակայն պաշտոնական կայքէջի բացակայության պատճառով չեն հրապարակվում: Քոլեջում առկա չեն նաև կառավարման օղակի կողմից կայացված որոշումների հրապարակման, հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ:

Վերոնշյալ կանոնակարգերով, ինչպես նաև Կանոնադրությամբ, չեն սահմանվում խորհրդակցական մարմինների փոխգործակցության մեխանիզմները, հստակեցված չէ, թե արդյոք դրանց միջև առկա է հիերարխիկ կապ, արդյոք առկա են հաշվետվողականության մեխանիզմներ: Խորհրդակցական մարմիններից և ոչ մեկի կանոնակարգում առկա չէ ձևակերպում կայացված որոշումների իրականացման վերահսկողության, կայացված որոշումների արդյունավետության գնահատման, որոշումների իրականացման ընթացքում առաջացող խոչընդոտների վերլուծության գործիքակազմի և մեխանիզմների վերաբերյալ:

Որոշ դեպքերում քոլեջում գործող խորհուրդների լիազորությունները խաչվում են, մասնավորապես քոլեջի ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման

լիազորություններ վերապահված են ինչպես մանկավարժական, այնպես էլ ուսումնամեթոդական խորհրդին: Քոլեջի խորհրդի նիստերի արձանագրությունների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ խորհրդը քննարկում է ինչպես ռազմավարական նպատակներին և խնդիրներին առնչվող, այնպես էլ խորհրդակցական մարմինների լիազորությունների շրջանակում գտնվող հարցեր:

Ինքնավերլուծությանը կից ներկայացված վերջին երեք տարիների ֆինանսական ռեսուրսների կառավարման աղյուսակի համաձայն, կառավարման օղակի կարողությունների բարելավման, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով ֆինանսական ռեսուրսներ չեն հատկացվում: Վերոնշյալ փաստաթղթի համաձայն, ֆինանսական ելքերի մոտավորապես 90%-ը ուղղվում է աշխատավարձերին, մոտավորապես 9%-ն ուղղվում է կրթաթոշակներին և տնտեսական ծախսերին: Քոլեջի զարգացման հնգամյա պլանով սահմանված նպատակների և խնդիրների իրագործման համար ֆինանսական ռեսուրսներ չեն հատկացվում:

Համաձայն ինքնավերլուծության, քոլեջի ներկայացուցչական մարմինները, դասախոսները, ուսանողները հնարավորություն ունեն ներգրավվել կառավարման գործընթացում, մասնակցել ինչպես հարցերի քննարկմանը, այնպես էլ դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Քոլեջում գործող մանկավարարժական խորհուրդը, որում ներգրավված են բոլոր դասախոսները, քննարկում է ուսումնական գործընթացի կազմակերպման և բարելավման վերաբերյալ հարցեր և համապատասխան առաջարկներ է ներկայացնում քոլեջի ուսումնամեթոդական գծով փոխտնօրենին: Ուսանողները նույնպես մասնակցում են իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին՝ ներգրավված լինելով կառավարման մարմիններում:

Մինչ 2012թ. քոլեջում չի եղել մշակված և հաստատված ռազմավարական ծրագիր: Առաջին զարգացման ծրագիրը կազմվել է 2012-2017թթ. գործունեության համար: Ռազմավարական ծրագրի ավարտին չի իրականացվել կատարողականի վերլուծություն: Քոլեջում առկա են կարճաժամկետ, միջնաժամկետ պլաններ, ընդ որում կարճաժամկետ և միջնաժամկետ պլանները կազմվել են մեկ ընթացիկ տարվա համար: Քոլեջի գործունեության երկարաժամկետ պլանավորումը արտահայտված է զարգացման հնգամյա ծրագրում: Գործող ռազմավարական ծրագրում ներկայացված չեն նախանշված ռազմավարական նպատակների և խնդիրների իրագործման մշտադիտարկման մեխանիզմները: Ինչպես կարճաժամկետ և միջնաժամկետ պլաններում, այնպես էլ ռազավարական ծրագրով սահմանված չեն գործունեության գնահատման առանցքային ցուցիչներ:

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն քոլեջը առանձնացրել է իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնները, որոնք ուսումնասիրվում և վերլուծվում են քոլեջի ստորաբաժանումների կողմից: Քոլեջն իր գործունեության վրա ազդող արտաքին գործոններ է համարում ընդունելությունը, ֆինանսական համակարգը, աշխատաշուկայի հարափոփոխ պահանջները, օրենսդրական փոփոխությունները, իսկ ներքին գործոններ՝ դասախոսական կազմի հոսունությունը, կաբինետ-լաբորատորիաների համապատասխան նյութերով և պարագաներով ապահովվածությունը, ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը: Սակայն չի ներկայացվում վերոնշյալ գործոնների ուսումնասիրության գործիքակազմը, արդյունքների վերլուծության մեխանիզմները: Ստորաբաժանումների կողմից ներկայացված

հաշվետվությունները վերլուծական բնույթ չեն կրում, չեն սահմանում բացահայտված խնդիրները և չեն ներկայացնում դրանց բարելավմանն ուղղված աշխատանքներ։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում չեն գործում կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, սահմանված չէ համապատասխան գործիքակազմ և պատասխանատու անձ/ստորաբաժանում։ Ինքնավերլուծության մեջ հղում չի արվում, և կից ներկայացված հավելվածների շարքում առկա չեն քոլեջի կառավարման գործընթացների գնահատման և բարելավման պլաններ։ Քոլեջի գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման և մասնակի իրականացման փուլում:

Քոլեջում գործում է մասնագիտական կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կանոնակարգ: Կանոնակարգի համաձայն, կրթական ծրագրերի մոնիթորինգը և վերանայումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխան առարկայական ցիկլային հանձնաժողովի նախագահի/ամբիոնի վարիչի/ կողմից։ Սակայն կանոնակարգը չի սահմանում մոնիթորինգի իրականացման գործիքակազմը, տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, արդյունքների ներկայացման մեխանիզմները։ Կանոնակարգում նշվում է, որ մոնիթորինգը և վերանայումն իրականացվում է դասալսումների, ուսանողների և դասախոսների հարցաթերթիկների հիման վրա։ Դասալսումների արդյունքներն ամփոփվում են բանավոր զրույցների ձևով: Քոլեջում առկա չեն դասավանդման և ուսումնառության գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատման, ինչպես նաև առաջավոր փորձի բացահայտման և շահակիցների լայն շրջանակին ներկայացման մեխանիզմներ:

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն, քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը արտաքին և ներքին շահակիցներին հասանելի է բուկլետների, ցուցապաստառների, ֆեյսբուքյան էջի միջոցով:

Քոլեջի ֆեյսբուքյան էջում առկա չեն մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին որակական և քանակական տվյալների հրապարակումներ։ Քոլեջը չունի պաշտոնական կայքէջ։ Քոլեջում չեն գործում ուսումնական և մասնագիտական գործունեության վերաբերյալ տեղեկատվության լուսաբանման, գնահատման մեխանիզմներ, մշակված չէ համապատասխան ընթացակարգ, առանձնացված չէ համապատասխան լիազորություններ ունեցող ստորաբաժանում և/կամ աշխատակից: Ինքնավերլուծության մեջ առկա չէ և փորձագիտական այցի ընթացքում չի ներկայացվել իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների գնահատման վերաբերյալ հաշվետվություն/զեկույց/վերլուծություն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում խորհրդակցական մարմինների, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգված գործընթացի իրականացումը: Քոլեջի կանոնադրությամբ սահմանվում են որոշում կայացնող մարմինները, սակայն խորհրդակցական մարմինների չսահմանված հիերարխիկ կապի, ինչպես նաև ստորաբաժանումների միջև հորիզոնական թույլ համագործակցության պատճառով, իրականացվող գործառույթները, քննարկվող հարցերը կարող են կրկնվել:

Ստորաբաժանումների հորիզոնական համագործակցության հստակ մեխանիզների բացակայության պատճառով կարող է խաթարվել գործունեության ռազմավարական պլանավորումը: Քոլեջի պաշտոնական կայքէջի բացակայության պատճառով ստորաբաժանումների, ինչպես նաև խորհրդակցական և ներկայացուցչական մարմինների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը ուսումնասիրելու, իրավունքներին և պարտականություններին ծանոթանալու առումով քոլեջի ինչպես արտաքին և այնպես էլ ներքին շահակիցները կարող են լրացուցիչ դժվարություններ ունենալ: Բացի դրանից, քոլեջի կառավարման մարմինների կայացրած որոշումները չեն հրապարակվում, ինչը խոչընդոտում է որոշումների վերաբերյալ հետադարձ կապի ապահովմանը, արդյունքում կառավարման մարմինները չեն կարողանում վերահսկել որոշումների իրագործման ընթացքը, բացահայտել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և գնահատել կայացված որոշումների արդյունավետությունը:

Թեև քոլեջում ստեղծվել են գործողությունների կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, սակայն ռազմավարական պլանավորման մշակույթի բացակայության պատճառով դրանք բավարար չափով չեն ուղղորդում քոլեջի առաքելության և նպատակների իրականացման գործընթացները: Քանի որ ներկայացված ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման ցուցիչներ չեն սահմանվել և մշտադիտարկման մեխանիզմներ չեն ստեղծվել, հետևաբար չի կանոնակարգվում նաև ռազմավարական ծրագրի իրականացման շեղումները բացահայտելու, խոչընդոտների հաղթահարման և բարելավմանը միտված աշխատանքների իրականացումը: Քոլեջում թեև ներկայացվում են տարեկան հաշվետվություններ, սակայն դրանք վերլուծական բնույթ չեն կրում, չեն բացահայտում հաշվետու տարվա կամ կիսամյակի ընթացքում առաջացած խնդիրները, հետևաբար առկա խնդիրներին արագ լուծում չի տրվում:

Քոլեջի գործունեության վրա ազդող հնարավոր գործոնների բովանդակային ուսումնասիրությունը կրում է իրավիճակային բնույթ: Հստակ պարբերությամբ չեն իրականացվում արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություններ, արդյունքում չեն մշակվում նաև արտաքին ռիսկերի հաղթահարմանն ուղղված գործողություններ: Թեև քոլեջն արատաքին վտանգ է դիտարկում տարածաշրջանում գործող միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ հետևաբար մրցակցության առկայությունը, սակայն չի իրականացնում ուսանողների թվի փոփոխության կանխատեսում: Ընդհանուր առմամբ քոլեջը չի իրականացնում գործունեության վրա ազդող արտաքին և ներքին ռիսկերի արդյունավետ գնահատում և կառավարում:

Թեև քոլեջի ստորաբաժանումների մեծ մասն ունեն հաստատված կանոնակարգեր, սակայն դրանք մեծ մասամբ չեն պարունակում նկարագրություն գնահատման գործիքների վերաբերյալ, հարակից ձևաթղթեր, գործարկումը ապահովող մեխանիզմներ: Բացի դրանից քոլեջում չի իրականացվում ստեղծված կանոնակարգերի արդյունավետության գնահատում: Ընդհանուր առմամբ գործող կանոնակարգերը չեն նպաստում քոլեջի առաքելության ու ռազմավարական նպատակների արդյունավետ կերպով իրականացմանը և կրթության որակի ապահովմանը:

Քոլեջի պաշտոնական կայքէջի բացակայության պատճառով քոլեջում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության վերաբերյալ քոլեջի կողմից կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին որակական և քանակական տեղեկատվություն չի ներկայացվում: Արդյունքում քոլեջը լրացուցիչ դժվարություններ է

ունենում հավանական դիմորդների շրջանում գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման՝ հետևաբար նրանց հավաքագրման առումով:

Եզրահանգում:

Հաշվի առնելով խորհրդակցական մարմինների փոխգործակցության մեխանիզմների և կառուցվածքային ստորաբաժանումների հորիզոնական կապերի անկատարությունը, որոշումների իրագործման վերահսկողության մեխանիզմների բացակայությունը, կազմված կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններում առաջընթացի ցուցիչների բացակայությունը՝ հետևաբար՝ մշտադիտարկման անհնարինությունը, տեղեկատվության հրապարակման բազմագործառութային հարթակի բացակայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում Չափանիշ 2-րդի պահանջներին:

Եզրակացություն:

ԴՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Դիլիջանի պետական բժշկական քոլեջը Տավուշի մարզի միակ միջին մասնագիտական բժշկական կրթական հաստատությունն է: ՄՈՒՀ-ն իրականացնում է միջին մասնագիտական բժշկական կրթական 5 ծրագիր՝ հետևյալ մասնագիտություններով.

1. Քույրական գործ /առկա/ - բուժքույր/բուժեղբայր որակավորմամբ (ուսման տևողությունը միջնակարգ կրթությամբ՝ 3, հիմնական կրթությամբ՝ 4 տարի),

2. Մանկաբարձական գործ /առկա/ - մանկաբարձ որակավորմամբ (ուսման տևողությունը միջնակարգ կրթությամբ՝ 3, հիմնական կրթությամբ՝ 4 տարի),

3. Դեղագործություն /առկա, հեռակա/ - դեղագործ որակավորմամբ (ուսման տևողությունը միջնակարգ կրթությամբ՝ 2, հիմնական կրթությամբ և հեռակա՝ 3 տարի),

4. Ատամնատեխնիկական գործ /առկա/ - ատամնատեխնիկ որակավորմամբ (ուսման տևողությունը միջնակարգ կրթությամբ՝ 2, հիմնական կրթությամբ՝ 3 տարի),

5. Բուժական կոսմետոլոգիա /առկա/ - բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգ որակավորմամբ (ուսման տևողությունը միջնակարգ կրթությամբ՝ 2, հիմնական կրթությամբ՝ 3 տարի) :

ՄՈՒՀ-ում 2021- 2022թթ-ից ուսուցումը բոլոր բաժիններում իրականացվում է ըստ մոդուլային ՄԿԾ-ների: ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների համար առկա են հաստատված պետական կրթական չափորոշիչներ (այսուհետ՝ ՊԿՉ) և դրանց համապատասխան մասնագիտական կրթական ծրագրեր (այսուհետ՝ ՄԿԾ): Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ՄԿԾ-ները (դիտարկվող ՄԿԾ-երից 2-ը՝ ‹‹Ատամնատեխնիկական գործ›› և ‹‹Դեղագործություն›› (ներդրվել են համապատասխանաբար 2017-18թթ; 2020-21թթ.) մոդուլային են, իսկ ‹‹Քույրական գործ››-ը՝ ոչ

մոդուլային) համահունչ են ՄՈՒՀ-ի առաքելությանը, որն է՝ պատրաստել բանիմաց, բարձր որակավորման կարողություններով և հմտություններով օժտված, աշխատաշուկայի արդիպահանջներին համապատասխան առողջապահության ոլորտի միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներ: Այդ նպատակով մշտապես վերահսկվում է ուսումնական գործընթացի ճշգրիտ իրագործումն ըստ համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլանների, որը բերում է անհրաժեշտ վերջնարդյունքի ձևավորմանը:

ՄԿԾ-ների իրականացմանը հետևում են և խնդիրները վեր են հանվում մեթոդիստի, ամբիոնի վարիչի, ուսումնամեթոդական խորհուրդի, ուսումնական գծով փոխտնօրենի կողմից:

ՄԿԾ-ները համահունչ են ՊԿՉ-ներին, ուսումնական պլաններում դասաժամերի բաշխվածությունը համապատասխանում է ՊԿՉ-ին, կատարված է տեսական, գործնական և պրակտիկայի ժամերի հստակ տարանջատում, մուտքային պահանջները պահպանվում են, հստակ սահմանված են խորհրդատվության ժամերը: ՊԿՉ-ներում ներկայացված են վերջնարդյունքներն ըստ շնորհվող որակավորումների, ինչպես նաև մասնագիտության նկարագրերը (մասնագիտության դերը, խնդիրների բնագավառները, աշխատանքային գործընթացը, կատարման չափանիշները, կարողություններն ու հմտությունները) : Ելնելով ՄԿԾ-ներից՝ յուրաքանչյուր մասնագիտության համար կազմվում են ուսումնական պլաններ, որը հաստատվում է քոլեջի տնօրենի կողմից:

Ուսումնական պլաններին համապատասխան կազմվում են առարկայական ծրագրերը, որոնք քննարկվում են համապատասխան ամբիոնների նիստերում և մասնագետ դասավանդողների կողմից հավանության արժանացած ծրագրերը ներկայացվում են մեթոդական խորհրդին, քննարկվում, ապա հաստատվում են ՄՈՒՀ-ի խորհրդի նիստում: Աշխատանքային ծրագրերին համապատասխան կազմվում են օրացուցային թեմատիկ պլաններ, օրվա դասի պլաններ՝ որտեղ նշվում է դասի նպատակը, ուսումնառության վերջնարդյունքները, ակնկալվող վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման մեթոդները, անհրաժեշտ պարագաները:

Փորձագիտական խմբի դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ՊԿՉ-ները և ՄԿԾ-ները համապատասխանում են որակավորումների ազգային շրջանակների (այսուհետ՝ ՈԱՇ) 5-րդ մակարդակի պահանջներին, սակայն ՄՈՒՀ-ը չունի ՄԿԾ-երի վերջնարդյունքներն ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխանեցնելու համար մշակված համապատասխան մատրիցաներ (քարտեզագրումներ): Ամբիոններում բժշկամանկավարժական կազմի կողմից իրականացվում է ՄԿԾ-ներից ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն (համագործակցային դասավանդման մեթոդներ, գործնական հմտությունների ալգորիթմեր, դերախաղեր, իրավիճակային խնդիրներ, որոշ դեպքերում սալիկաշարեր, ‹‹Ձեռներեցություն›› մոդուլի շրջանակներում՝ SWOT վերլուծություն) :

ՄՈՒՀ-ն ունի ‹‹Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման համակարգի›› կանոնակարգ-ընթացակարգ, սակայն գնահատման միջոցները հստակեցված և կանոնակարգված չեն, բացակայում են գնահատման չափանիշները և

բաղադրիչները (ինչպե՞ս 10 միավորանոց սանդղակով գնահատել հարցերի, իրավիճակային խնդիրների, դերախաղերի, համար գրաֆստրուկտուրաների, գործնական հմտությունների ալգորիթմերի, ռեֆերատների, պրակտիկայի օրագրի արդյունքները, բացակայում են նաև հստակ չափանիշներ, թե քանի անգամ ուսանողը պետք է կրկնի գործողությունը, որ այն համարվի դրական):

ՄՈՒՀ-ում իրականացվող ՄԿԾ-ներում առկա են ընտրովի առարկաներ (մոդուլներ), սակայն փորձագիտական խմբի կողմից դիտարկվող կրթական ծրագրերում դրանք բացակայում են: Ընտրովի առարկա առկա է «Մանկաբարձական գործ» կրթական ծրագրում:

Ըստ ԴՊԲՔ-ի ինքնավերլուծության ՄՈՒՀ-ն ապահովում է ուսումնական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազա, սակայն փորձագիտական այցի արդյունքում պարզվեց, որ դրանց մեծ մասն արդիականությունը կորցրած է: ՄՈՒՀ-ում բացակայում է ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը:

ՄՈՒՀ-ում դասավանդող բժիշկների աշխատանքային փորձը ընդհանուր առմամբ կիրառվող դասավանդման մեթոդները կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան են: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ պրակտիկայի ընթացքում ՄՈՒՀ-ի ուսանողներն ու շրջանավարտներն իրենց ձեռք բերած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների հիման վրա ցուցաբերում են լավ ունակություններ և կարողություններ.այս մասին են վկայում գործատուների կողմից ուսանողներին, շրջանավարտներին տրված շնորհակալագրերը: Գործատուները տարածաշրջանում կարևորում են դեղագործական բաժնի բացումը, քանի որ նշված մասնագիտությամբ շրջանավարտների կարիքը խիստ զգացվում է, և նրանք արագ գտնում են աշխատանք:

Համավարակով պայմանավորված՝ ուսուցումն իրականացվել է առցանց, որը առաջացրել է որոշակի բարդություններ (օր.՝ դերախաղեր, գործնական հմտություններ կատարելու հնարավորության բացակայություն) : Փորձագիտական խմբի կողմից առցանց կատարված դասալսումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում չի կիրառվում առցանց դասավանդման մեկ միասնական համակարգ: Դասախոսներն ազատ են դասավանդման մեթոդների և առցանց հարթակի ընտրության հարցում.դասապրոցեսն իրականացվում է VIBER և ZOOM հավելվածների միջոցով:

Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ դասապրոցեսի իրականացումը դասավանդվող առարկաների և մոդուլների մեծ մասի դեպքում այդքան էլ արդյունավետ չէ: Կիրառվում է հիմնականում հարցուպատասխանի մեթոդը, նոր նյութը մատուցվում է բանավոր, համագործակցային մեթոդներ չեն կիրառվում: Չնայած նրան, որ կան դասախոսներ, որոնք կիրառում են դասավանդաման նոր մեթոդներ, այնուամենայնիվ, հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսների մի որոշ մաս դասերն իրականացնում է նյութի թելադրությամբ: Դասալսումներից պարզվեց նաև, որ ‹‹Քույրական գործի հիմունքներ›› առարկայի դասախոսը վերանայել է դասավանդման և ուսումնառության

մեթոդները, մշակել արդյունավետ հանձնարարականներ (սլիկաշարեր, խաչբառեր, գործնական հմտությունների տեսաֆիլմեր, ուսանողների կողմից կատարվող գործնական հմտությունների տեսանկարահանումներ, տնային հանձնարարություններ), իսկ ‹‹Ատամնատեխնիկական գործ›› բաժնի դասախոսը տեսազանգի միջոցով ցուցադրում և բացատրում էր գործնական հմտությունները: Սակայն տվյալ մեթոդների կիրառումը ինստիտուցիոնալ բնույթ չի կրում:

Առցանց դասընթացների ընթացքում գնահատման և ակադեմիական ազնվության ապահովման հետ կապված եղել են որոշակի դժվարություններ՝ դասախոսները չեն ունեցել գնահատման մեկ միասնական մոտեցում: Դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ ոչ բոլոր դասախոսներն են ապահավում հետադարձ կապի մեխանիզմներ ուսանողների հետ իրենց գնահատականներին առնչվող:

ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կանոնակարգ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բողոքարկման դեպքեր չեն լինում.եթե առաջանում են անհամաձայնություններ, ապա դրանք լուծվում են կուրսղեկերի միջնորդությամբ:

ՄՈՒՀ-ում պրակտիկաների անցկացման համար առկա են կնքված պայմանագրեր բուժհիմնարկների, դեղատների, ատամնաբուժարանների, գեղեցկության սրահի հետ: Պրակտիկաներին հետևում է ՄՈՒՀ-ի պրակտիկայի պատասխանատուն: Նախաավարտական պրակտիկայից հետո ուսանողները ներկայացնում են լրացված ‹‹Պրակտիկայի օրագիր››-ը:

ՄՈՒՀ-ում պետական ամփոփիչ ատեստավորումը կատարվում է սահմանված կարգով: Որակավորումների շնորհումն իրականացվում է հատուկ հանձնաժողովի միջոցով, որում ներգրավված են դասախոսական կազմի ներկայացուցիչներ և մասնագիտական ոլորտի արտաքին շահակիցներ (գործատուներ) : Փորձագիտական խմբին ներկայացրած քննական տոմսերի օրինակները հիմնականում ներառում են տեսական հարցադրումներ: Կարողության կամ հմտության գնահատման համար տոմսերում ներառված է մեկ հարց, սակայն ՄԿԾ-ների վերջնարդյունքներում գերակշռում են մասնագիտական կարողություններն ու հմտությունները: Այս խնդիրը ՄՈՒՀ-ը փորձում է լրացնել ուսանողների պոտենցիալ աշխատավայրերում գործնական պարապմունքների և պրակտիկայի կազմակերպման միջոցով:

Փորձագիտական այցի ընթացքում իրականացվել են մասնագիտական զրույցներ երեք դիտարկվող կրթական ծրագրերին առնչվող: Զրույցների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների մոտ առկա են տեսական և գործնական գիտելիքներ (աղտահանված ձեռնոցներ հագնելու հմտություններ, աղտահանիչ լուծույթների պատրաստման ալգորիթմը, պրոթեզների պատրաստաման հաջորդական փուլերը և այլն):

ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ են ՀՀ այլ բժշկական ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ (տրամադրվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից): Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի ծրագրերի համադրման հիման վրա

ուսանողների և դասախոսական կազմի շարժունությունն ապահովող պայմանագրեր կամ այլ մեխանիզմներ: ՄՈՒՀ-ում չկա բենչմարքինգի իրականացման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական խմբի դիտարկումների ՄՈՒՀ-ն ունի ‹‹ՄԿԾ-ների մշտադիտարկման և մշակման կարգ››, սակայն արդյունավետության գնահատման գործընթացներին հիմնականում մասնակցում են ներքին շահակիցները, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը հիմնականում սահմանափակվում է պետական ամփոփիչ ատեստավորմանը նրանց մասնակցությամբ և մասամբ հարցաթերթերի միջոցով: Ամփոփիչ ատեստավորման արձանագրությունները հիմնականում նկարագրողական բնույթ ունեն:

Ներքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով ուսանողների և դասախոսական կազմի շրջանում կատարվում են հարցումներ (հիմնականում բանավոր), դասալսումներ: Սակայն տվյալ հարցումների արդյունքները և դասալսումների արձանագրությունները չեն վերլուծվում և դրանց հիման վրա փոփոխություններ չեն իրականացվում կրթական ծրագրում:

Ըստ ինքնավերլուծության և դասախոսական կազմի հետ փորձագիտական խմբի հանդիպման արդյունքում պարզվեց, որ ՄԿԾ-ներում փոփոխություններ հազվադեպ են կատարվում: Հիմնականում փոփոխության է ենթարկվում գործնական և տեսական ժամերի համամասնությունը, որտեղ փոփոխության հնարավորությունը 10%-ի սահմանում է:

Դատողություններ:

Փորձագիտական խմբը դրական է գնահատում այն, որ ԴՊԲՔ-ի ՄԿԾ-ները համահունչ են ՄՈՒՀ-ի առաքելությանը, համապատասխանում են ՊԿՉ-ներին և ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջներին, ինչը կարևոր նախադրյալ է ՄՈՒՀ-ի զարգացման ծրագրով սահմանված նպատակներն իրականցման տեսանկյունից:

ՄՈՒՀ-ի ամբիոնների կողմից մշակվում են ՄԿԾ-ներից ակնկալվող վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը: Գործատուների հետ հանդիպումը ևս փաստեց, որ նրանք հիմնականում բավարարված են ՄՈՒՀ-ի շրջանավարտների տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում դասավանդող բժիշկների աշխատանքային փորձը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ կիրառվող դասավանդման մեթոդները կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան են: ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման կանոնակարգ-ընթացակարգ, սակայն այն անկատար է՝ գնահատման միջոցները հստակեցված և կանոնակարգված չեն, բացակայում են գնահատման չափանիշները և բաղադրիչները:

Գնահատման համակարգի չափանիշների և բաղադրիչների բացակայությունը փորձագիտական խմբի գնահատմամբ կարող է խոչընդոտել ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերմանը և անաչառ գնահատմանը:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման կանոնակարգ, և տվյալ

գործընթացները կանոնակարգվում են կուրսեղեկների կողմից, այնուամենայնիվ հստակ ներկայացված չեն կուրսղեկների դերի և գործողությունների հաջորդական քայլերը տվյալ գործընթացներում: Տվյալ գործընթացները չեն իրականացվում ըստ սահմանված կանոնակարգի, և կուրսղեկների մասնակցությունը տվյալ գործընթացին կարող է խոչընդոտել բողոքարկման գործընթացի անաչառ իրականացմանը:

Թեև ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցատոմսերն ընդգրկում են տեսական և գործնական հարցեր, սակայն դրանք հիմնականում ուղղված են տեսական գիտելիքի ստուգմանը. նշված մոտեցումը թույլ չի տալիս լիարժեք գնահատել ուսանողի գործնական հմտությունները:

ՄՈՒՀ-ն ունի ՄԿԾ-ների վերջնարդյունքների ապահովման համար անհրաժեշտ դասախոսական կազմ, դասավանդման և ուսումնառության մեթոդներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ արդիականությունը կորցրած ռեսուրսները կարող են խոչընդոտել արդի աշխատաշուկայի պահանջներին և մարտահրավերներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

ՄՈՒՀ-ում չկա բենչմարքինգի իրականացման քաղաքականություն, սակայն, հաշվի առնելով առկա հաստատված ՊԿՉ-ները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ն ունի հիմքեր ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման համար՝ ըստ համապատասխան ՄԿԾ-ների:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, կիրառվող դասավանդման մեթոդները կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան են, կրթական ծրագրերը կարող են նպաստել ուսանողների և դասախոսների շարժունությանը, ունեն համապատասխան դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ ՄԿԾ-ների իրականացման համար, համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին, փորձագիտական խումբը գտնում է որ ՄԿԾ-ները ընդհանուր առմամբ բավարարում են Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ԴՊԲՔ-ում ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի համաձայն, ՀՀ ԿԳՄՍ Նախարարի հրամանով, ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի: ԴՊԲՔ-ն յուրաքանչյուր տարի կազմակերպում է բանավոր քննություն միայն «Կենսաբանություն»

առարկայից՝ առկա ուսուցման համակարգում սովորող «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտություններով և հեռակա ուսուցման համակարգում սովորող «Դեղագործություն» մասնագիտությամբ: Ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է քոլեջի ընդունող հանձնաժողովը: Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ դեռևս ընդունելության քննությունների գնահատականների բողոքարկման դեպքեր տեղի չեն ունեցել:

Ինքնավերլուծությունը ուսումնասիրման և այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԴՊԲՔ-ում առկա է ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացում հստակ մեխանիզմեր: Յուրաքանչյուր ուսումնական տարվա նախաշեմին կատարվում են այցելություններ տարածաշրջանի և գյուղերի դպրոցներ, կազմակերպվում են բաց դռների օրեր: Տպագրվում և տարածվում են բուկլետներ, նկարահանվում մասնագիտական տեսաֆիլմեր: Մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությունը տարածվում է նաև «Դիլիջանի քաղաքացիական» թերթի միջոցով: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա մեխանիզմների արդյունավետության վերլուծություն չի իրականացվել: Հարկ է նշել, որ ԴՊԲՔ-ն ունի գործող ֆեյսբուքյան էջ, սակայն չունի էլեկտրոնային կայք: 2021թ.-ին ընդունվել են 124 ուսանող: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում քոլեջի մասին տեղեկացել են իրենց հարազատներից, ովքեր քոլեջի շրջանավարտներ են:

Ինքավերլուծությունում նշվում է, որ ԴՊԲՔ-ում ուսանողները հանդես են գալիս որպես գլխավոր ներքին շահակիցներ, այդ իսկ պատճառով ՄՈՒՀ-ը նրանց կարիքների վերհանումն ու դրանց բավարարումը համարում է իր կարևորագույն նպատակներից մեկը: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԴՊԲՔ-ն ունի կրթական կարիքների վերհանման տարբեր մեխանիզմներ: Ուսանողները ընդգրկված են կառավարման խորհրդի կազմում՝ հնարավորություն ունենալով կատարել տարբեր առաջարկներ և վերհանել խնդիրներ, որոնք հիմնականանում չեն առնչվում ուսումնական գործընթացին: Դրանք հիմնականում նեռարել են այնպիսի խնդիրներ՝ինչպիսիք են ուսանողների կեցության ապահովան, ուսման վարձավճարի և այլ խնդիրներ: ՄՈՒՀ-ում ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) ծավալում է ակտիվ գործունեություն ուսանողների կրթական կարիքների վերհանման գործում.զրույցներ են անցկացնում բացակայող ուսանողների հետ՝ փորձելով վերհանել նրանց խնդիրները, ապա կուրսերի ավագների հետ, վերհանված կարիքները ներկայացնում են տնօրենին: Ուսանողները հնարավորություն ունեն դիմել կուրսղեկներին և դաստիարակչական գծով փոխտնօրենին: Ուսումանական հաստատությունում առկա է նաև առաջարկությունների արկղ: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ եթե ուսանողների խնդիրը կապված է դասախոսի հետ, ապա ուսանողները առանց որևէ մեկի միջնորդության դիմում են տվյալ դասախոսին:

Ուսանողների կարիքները գանահատելու և նրանց բավարարվածության մակարդակը տարբեր ասպեկտներից գնահատելու նպատակով իրականացնում են տարաբնույթ հարցումներ, որոնց արդյունքները վեր է լուծում ուսումնական գծով փոխտնօրենը, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ գործընթացը չի փաստաթղթավորվում: Հարցումների արդյունքում բացահայտված հիմնական խնդիրները առնչվում են գրքերի արդիակացման, ջեռուցման և մարզադահլիճի կահավորման և արդիականացման հետ, որոնց ուսումանական հաստատությունը դեռ չի կարող լուծում տալ՝ սուղ ֆինանսական ռեսուրսների պատճառով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների արդյունավետ ուսումառությանը նպաստելու նպատակով ԴՊԲՔ-ը ստեղծել է լրացուցիչ խորհրդատվություն տրամադրելու հնարավորություն: ԴՊԲՔ-ում առկա է ըստ ուսումնական պլանի խորհրդատվության ժամանակացույց: Կազմակերպվում են խորհրդատվություններ կուրսղեկի ժամերի ընթացքում, ինչպես նաև ուսանողների համար խորհրդատվություն են ապահովում մասնագիտական ամբիոնները և առարկայական կաբինետները: Յուրաքանչյուր կիսամյակը սկսելուց առաջ ուսումնական գծով փոխտնօրենը կազմում է միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման ժամանակացույց որտեղ զետեղված են խորհրդատվությունների օրերը և ժամերը: Քոլեջում առկա է մշակված մեխանիզմներ հետ մնացած ուսանողներին ներգրավելու նպատակով, սակայն բացակայում է հստակ սահմանված ժամանակացույց:

Ուսանողներին օժանդակելու նպատակով ԴՊԲՔ-ում գործում են վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները կարող են դիմել վարչական անձնակազմին ցանկացած պահին տարաբնույթ հարցերով: Ուսանողներին վարչական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հիմանականում տեղեկացնում են կուրսղեկները: Ուսանողների մեծ մասը տեղեկացված են վարչական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների մասին և հանարավորինս տարբեր խնդիրներով դիմում են: ԴՊԲՔ-ն իրականացնում է հարցումներ ուսանողների մոտ վարչական անձնակազմի մատուցվող ծառայությունների վերաբերյալ նրանց իրազեկվածության և բավարարվածության մակարդակը ստուգման նպատակով:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում արդյունավետորեն գործում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների պատասխանատու մարմինը: Կարիերայի ստորաբաժանումը ունի կանոնակարգ, որը առաջնորդվում է տնօրինության կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանով: Ըստ ինքնավերլուծության, կարիերայի կենտրոնն ունի ուսումնական հաստատությունում տեղեկատվական վահանակ, որը պարբերաբար թարմացվում է: Կարիերայի կենտրոնը համագործակցում է ՈՒԽ-ի հետ, որի հետ համագործակցելով մշակվում են տարբեր ձևաչափով հարցումներ, որոնք ուղղված են ուսանողների կրթական կարիքներ վերհանմանը: Կարիերայի կենտրոնը, ներկայացնելով յուրաքանչյուր մասնագիտությունների առանձնահատկությունները, զբաղվում է նաև դիմորդների մասնագիտական կողմնորոշմամբ, ինչպես նաև, այն դիմորդներին ովքեր դժվարանում են ընտրել իրենց մասնագիտությունները, տրամադրում մասնագիտական թեստեր: Ըստ ինքնավերլուծության կարիերայի կենտրոնը կատարում է ուսանողներին առնչվող բոլոր աշխատանքները, համագործակցում զբաղվածության կենտրոնի հետ, իրազեկում ուսանողներին աշխատաշուկայի և թափուր աշխատատեղերի մասին: Այցի ընթացքում շրջանավարտների հետ հանդիպումից պարզվեց, որ կարիերայի կենտրոնը շրջանավարտներին ուղղորդում է տարածքային զբաղվածության կենտրոն, կապ հաստատում ԲՈՒՀ-երում սովորող շրջանավարտների հետ: Վերջիններս այցելում են քոլեջ և ներկայացնում իրենց մասնագիտությունների առանձնահատկությունները՝ ապահովելով քոլեջ-շրջանավարտ կապը: Ինչպես նշվում է ինքնավերլուծությունում, այդպես էլ այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնը ավարտական կուրսերում սովորող ուսանողների մոտ անցկացնում է դասընթացներ՝ օգնելով նրանց կազմել աշխատանքային կենսագրություն (CV): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ սկսած 2018թ.-ից ՄՈՒՀ-ում ձևավորվել

է շրջանավարտների բազա, սակայն շրջանավարտների աշխատանքային հետագծի վերաբերյալ տեղեկատվությունը չի թարմացվում:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ուսանողները ՄՈՒՀ-ում կատարում են տարաբնույթ հետազոտական աշխատանքներ: Այցից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքները հիմնականում կատարվում են ռեֆերատների, ինքնուրյուն աշխատանքների, տարաբնույթ դերային խաղերի և այլ միջոցներով: Այդ աշխատանքները կատարում են նաև առարկայական խմբակներում, որում հիմնականում ըստ ցանկության ընդգրկված են բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները: Այցի ընթացքում, ընդանուր առմամբ պարզվեց, որ ուսանողները և դասախոսները ներգրավված են հետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, ներքին կարգապահական կանոներով: Ըստ ինքնավերլուծության՝ ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքները պաշտպանում է ՈՒԽ-ն, որը ուսանողների ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է, ներկայացնում է ուսանողներին իրենց իրավունքները և պարտականությունները: Սակայն ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների իրազեկման հարցով ՈՒԽ-ն թերի է գործում: Ուսանողների իրավունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները իրականացնում է վարչական անձնակազմը, մասնավորապես ուսումնադաստիրակչական գծով փոխտնօրենը: Ուսանողական հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ գրեթե բոլոր ուսանողները տեղեկացված են իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Ինչպես և նշվում էր ինքնավերլուծությունում այդպես էլ այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողներին մատուցվող կրթական և այլ ծառայությունների, ինչպես նաև որակի ապահովման մեխանիզմներ, որոնք նախկինում իրականացվել են փոխտնօրենի կողմից, իսկ ներկա պահին որակի ապահովման կենտրոնի կողմից: ՄՈՒՀ-ը իր մատուցվող ծառայությունների վերաբերյալ արձագանքները հիմնականում ստանում է ուսանողների անանուն հարցումների և անհատական առաջարկությունների միջոցով: Ըստ ինքնավերլուծության այդ գործընթացը կարևորվում է որպես ուսումնական գործընթացի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ և դասավանդման որակի բարելավման միջոց, ինչը նույնպես հաստատվեց այցի ընթացքում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, որը նպաստում է դիմորդների կայուն հոսքի ապահովմանը: Դրական է, որ ՄՈՒՀ-ը օգնում է դիմորդներին իրենց մասնագիտությունը ընտրելու հարցում՝ տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություն, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ում բացակայում է էլեկտրոնային կայքէջը, որը կնպաստեր ուսանողների հավաքագրման մեխանիզմների առավել արդյունավետ կիրառմանը, ինչպես նաև շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների ձևավորմանը:

Դրական է գնահատվում այն հանգամանքը, որ քոլեջում առկա է ուսանողների կրթական կարիքների վերհանման կայուն մեխանիզմներ, որոնք նպաստում են ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ում առկա է խորհրդատվություն տրամադրելու սահմանված ժամանակացույց, որը հնավարություն է տալիս ուսանողներին ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ դեռևս բացակայում է ուսանողների լրացուցիչ պարապունքների տրմադրման մեխանիզմը, որի առկայությունը կնպաստի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

ՄՈՒՀ-ում արդյունավետորեն գործում են կարիերայի նպաստող ծառայությունները և նրանց համար պատասխանատու մարմինը: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ այս կառույցը հավաքագրում է ուսանողների շարժունության և շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով քոլեջ-շրջանավարտ, շրջանավարտ- աշխատաշուկա հետադարձ կապը:

Թեև ՄՈՒՀ-ում առկա է շրջանավարտների վերաբերյալ տվյալների բազա, այնուամենայնիվ բազայում առկա տեղեկատվությունը ժամանակ առ ժամանակ չի թարմացվում, որը հնարավորություն չի ընձեռում ՄՈՒՀ-ին ունենալ հստակ տեղեկատվություն իր շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ:

Քոլեջում առկա է ուսանողների վերլուծական/հետազոտական մտածողությունը զարգացնող որոշ մեխանիզմներ, սակայն այդ մեխանիզմները ունեն բարելավման անհրաժեշտություն: Նման մեխանիզմների կատարելագործումը կնպաստի ուսանողների մոտ վերլուծական և ստեղծագործ մտքի ձևավորմանը:

ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, ըստ ինքնավերլուծության նրանց իրավունքների մասին տեղեկացնում է ուսանողական խորհուրդը, որը սակայն թերի է գործում: Տվյալ գործընթացը հիմնականում իրականացնում է դաստիարակչական գծով փոխտնօրենը:

ՄՈՒՀ-ում առկա է ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ, որոնք կարևորվում են քելեջի կողմից, ինչը շատ խրախուսելի է:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն, առկա է ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ և մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր:

Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները ձևակերպված են ՀՀ ԿԳՄՄՆ կողմից հաստատված տվյալ ծրագրերին համապատասխանող կրթական չափորոշիչներում: Քոլեջում առկա են դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության, աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն և ընթացակարգերը: Կադրային ներուժը ուսումնասիրելիս հաշվի է առնվում պատրաստվածության մակարդակը, մանկավարժական և աշխատանքի փորձառությանը և այլն: Հարկ նշել նաև, որ քոլեջի դասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեության համար ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են աշխատանքային պայմանագրում: Դասախոսական կազմը համալրվում է մրցույթային կարգով՝ հայտարարությունների տարածմամբ, տարածքային զբաղվածության կենտրոնի հետ համագործակցության միջոցով: Ընտրությունը կատարվում մասնագիտական ամբիոնների ուսումնական ծրագրերի առանձնահատկություններին համապատասխան: Սակայն յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող ամրագրված հստակ պահանջներ չեն ներկայացված:

Այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում մեծ ուշադրություն է հատկացվում երիտասարդ մասնագետների ներգրավմանը, որոնց հետ տարվում են մենթորության աշխատանքներ լավագույն փորձի փոխանակման և դասավանդման ուղղությամբ: Հարկ է նշել, որ հիմնական դասախոսները կազմում են 72%, համատեղությամբ՝ 28% (այդ թվում նաև գործատուներ), որից 30 %-ը մինչև 40 տարեկան տարիքային խմբում է: ՄՈՒՀ-ը փորձում է ապահովել դասախոսական կազմի կայունությունը:

Քոլեջը ունի հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Դասախոսական կազմի աշխատանքի որակի գնահատումը կատարվում է փոխադարձ դասալսումների, ուսումնառողների գնահատման արդյունքների հիման վրա, ապա պլանավորվում հետագա անելիքները՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի արդիականացման և ուսանողների կարծիքները: Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ հաշվի առնելով արտաքին և ներքին շահակիցների կարծիքները, ամբիոններում քննարկվում են գնահատումների արդյունքում բացահայտված կարիքները, տրվում դրանց հնարավոր լուծումներ, կազմվում են նաև վերապատրաստումների կարիք ունեցող դասախոսների ցանկ. Որոշ դասախոսներ մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին: Սակայն, ներդրված չէ դասախոսական կազմի վերապատրստումներին ուղղված միասնական համակարգ: Սակավաթիվ ֆինանսական ռեսուրսների պայմաններում քոլեջը չի կարող իրականացնել անձնակազմի մասնագիտական վերապատրաստումներ:

Առկա է դասախոսական կազմի պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգ. Համաձայն քոլեջի ներքին կարգապահական կանոնների, աշխատողը խրախուսվում է արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի դիմաց ամբիոնի կողմից և առանձին դեպքում նաև ուսանողների հարցումների արդյունքում ձևավորված կարծիքից: Աշխատողի նկատմամբ սահմանված են խրախուսման տեսակները, ինչպիսիք են շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգևատրում, հուշանվերով պարգևատրում, լրացուցիչ վճարի տրամադրում, կարգապահական տույժի սահանում և այլն: Սակայն, այցի

ընթացքում պարզ դարձավ, որ սակավաթիվ ֆինասական միջոցներից լենելով, նյութական խրախուսում չի կատարվում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը ունի անհրաժեշտ դասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար: Ուսումնաօժանդակ անձնակազմը օգնում է դասախոսներին, տրամադրում դիդակտիկ պարագաները և այլն: Աշխատանքային պարտականությունների սահմանումը կարգավորվում է քոլեջի կանոնադրությամբ և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգով:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում արհեստավարժ, մասնագիտական և մարդկային բարձր հատկանիշներով օժտված դասախոսների, այդ թվում բժիշկ-դասախոսների, ինչպես նաև գործատուների ներգրավվածությունը քոլեջում: Այսուհանդերձ, ՄՈՒՀ-ում առկա չէ մասնագիտական ռեզերվ, հետևաբար որևէ դասախոսի բացակայության դեպքում կարող է վտանգվել ուսումնառության գործընթացի կազմակերպման բնականոն ընթացքը: Քոլեջը ներկա պահին ունի դասախոսական կազմի կայունություն (72% հիմնական աշխատակիցներ) և մինչև 40 տարեկան 32% դասախոսական կազմ, և համալրված է անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ունեցող վարչական և ուսումնաօժանդակ կազմով: Սակայն, մշակված չեն դասախոսական կազմի որակներին յուրաքնաչյուր կրթական ծրագրի համար ներկայացվող հստակ պահանջներ: Նման պահանջների առկայությունը կնպաստի մրցունակ կադրերի ներգրավմանը: Դրական է, որ դասախոսների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով, որը կարող է նպաստել մրցակցության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իրականացնում է դասախոսական կազմի գնահատում, իրականացվում են դասալսումներ, բաց դասեր, հարցումներ ուսանողների շրջանում: Առկա է դիմում-բողոքների ներկայացման և դրա քննարկման կանոնակարգ, սակայն ոչ միշտ է արձանագրված խնդիրներին լուծում տրվում: Բացահայտված խնդիրների հիման վրա աշխատանքների պլանավորումը կնպաստի դասախոսների մասնագիտական առաջընթացին:

Չնայած նրան, որ դասախոսները մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին, վերջին տարիներին դասախոսական կազմի մասնագիտական, ինչպես նաև օտար լեզվի, համակարգչային գիտելիքների, դասավանդման նոր մեթոդների վերապատրաստում չի իրականացվում սակավաթիվ ֆինանսական ռեսուրսների պատճառով: Դրական է, որ գործատու դասախոսները (բժիշկները) իրենց ոլորտում անցնում են մասնագիտական վերապատրաստումներ:

Այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսական կազմի փոխադարձ դասալսումների և բաց դասերի իրականացումը, որոշ չափով նպաստում է դասախոսների փորձի փոխանակմանը, մասնավորապես դասավանդման նոր մեթոդներին իրազեկմանը, երիտասարդ կադրերի՝ դասախոսների պատրաստմանը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, գործում են դասախոսական կազմի ընտրության, գնահատման, մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, ինչպես նաև անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար, փորձագիտական խումբը գտնում է որ քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջի զարգացման հնգամյա ծրագրում նախատեսված է իրականացնել հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեություն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը չունի հետազոտության իրականացման քաղաքականություն և չի սահմանել հետազոտության ոլորտում իր հիմնական հավակնությունների շրջանակը, ինչպես նաև սահմանված չեն երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Ամբիոնների հիմնական մասնագիտական ուղղվածության շրջանակներում դասախոսների կողմից կազմակերպվում և համակարգվում են ուսումնամեթոդական աշխատանքները, ինչպիսիք են դասավանդման նորագույն մեթոդների քննարկումը, մոդուլային համակարգի առարկաների դասավանդման մեթոդաբանության քննարկումը և այլն:

Դասախոսների և ուսանողների կողմից մշակվում և իրականցվում են ստեղծագործական, վերլուծական փորձարարական աշխատանքներ՝ (ռեֆերատներ, անհատական ինքնուրույն աշխատանքներ, ստենդներ, պաստառներ, մակետներ): Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առկա չեն նմանատիպ աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, և չեն հատկացվում համապատասխան ֆինանսական ռեսուրսներ: Դասախոսական կազմի կողմից չեն տպագրվում ուսումնամեթոդական ձեռնարկներ ֆինանսական սուղ միջոցների պատճառով:

Քոլեջի հետազոտական աշխատանքների ընթացիկ իրականացումը և վերահսկողությունը իրականացվում է դասախոսների, ամբիոնների վարիչների, ինչպես նաև ուսումնական մասի կողմից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվում են մասնագիտական/գիտական սեմինարներ, որոնց մասնակցում են քոլեջի դասախոսական և ուսանողական կազմը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական մտքի զարգացման նպատակով դիտարկվող կրթական ծրագրերի գործնական դասաժամերի ընթացքում տրվում են հանձնարարականներ՝ իրավիճակային խնդիրների կազմում և մեկնաբանում (օր. կազմել խնդիրներ «Տուբերկուլոզ»; «Բրոնխիալ ասթմա»; «Ազդրի կոտրվածքով անկողնային հիվանդի մոտ պառկելախոցերի կանխարգելում» թեմաների վերաբերյալ և դրանց ժամանակ իրականացնել քույրական գործընթացի փուլերը և այլն), դերային խաղերի սցենարի մշակում և իրականացում, (համադրելով տարբեր աղբյուրներ), պաստառների պատրաստում (օր. «Աղետների բժշկություն» մոդուլից՝ «Հիվանդների տարհանումը աղետի գոտուց» թեմայով, «Քույրական գործի հիմունքներ» առարկայից՝ «Ինֆեկցիոն պրոցեսի շղթա»; «Բուժկանխարգելիչ հիմնարկների տիպերը » թեմաներից և այլն) և խաչբառերի կազմում: Վերոնշյալ գործընթացները առավել ակտիվ կիրառվում են «Քույրական գործ», «Դեղագործություն» կրթական ծրագրերում: Քոլեջում գործում են առարկայական խմբակներ, որտեղ ուսանողներին հանձնարարվում են հետազոտական աշխատանքներ ռեֆերատների ձևով (օր. «Շփման ուղիները», «Կոմֆորտի գոտիները», «Էֆթանազիա», «Սթրես-ադապտացիա», «Մարդու հիմնական պահանջները», «Դեղագիտական գործունեության կազմակերպումը Հայաստանում» և այլն):

Հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացման համար քոլեջում առկա չեն մի շարք անհրաժեշտ ռեսուրսներ՝ համապատասխան հագեցված լաբորատորիաներ: Ավելին, քոլեջը չունի բավարար միջոցներ հետազոտության միջազգայնացումը ապահովելու համար:

Սակայն, փորձագիտական խումբը փաստում է նաև, որ հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելու լավագույն մեխանիզմներից է քոլեջի կողմից արդյունավետ իրականացվող ուսումնաարտադրական պրակտիկաները, որոնց ժամանակ ուսանողները հնարավորություն են ունենում օգտվել հիվանդանոցային մատյաններից, վերլուծում են հիվանդներին առնչվող դեպքերը, կատարում են եզրահանգումներ, որոնք հանդիսանալով ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս՝ խթանում են մասնագիտական հմտությունների ձևավորումը և անմիջականորեն նպաստում արհեստավարժ մասնագետների կայացման գործընթացին:

Դատողություններ:

Քոլեջում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման որոշ մեխանիզմներ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ մի շարք առաջադրանքների միջոցով, որոնք իրականացվում են գործնական դասաժամերի ընթացքում, ուսանողների մոտ ձևավորվում է հետազոտական և վերլուծական կարողություն, որը հետագայում կիրառվում է պրակտիկ աշխատանքում: Ուսանողներն իրականացնում են դերախաղեր, քննարկում հատուկ իրավիճակներ, որի ընթացքում զարգանում է ուսանողի վերլուծական կարողությունը: Ուսանողները ներկայացնում են նաև ինքնուրյուն աշխատանքներ, իրականացնում են փաստերի հավաքագրում, ինչպես նաև կատարում են պաստառների պատարաստում, որը նպաստում է ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանը:

Այցի ընթացքում պարզվեց, որ որոշ դեպքերում ուսանողները կարողանում են անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել և ստանձնել սեփական և այլ անձանց գործողություններին հետևելու և դրանք բարելավելու պատասխանատվություն:

Սակայն, քոլեջը դեռևս չունի հետազոտության զարգացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր և հետևաբար առկա չէ ուսանողների և դասախոսների վերլուծական, հետազոտական կարողություններին ուղղված միասնական մոտեցում:

Ուսանողները առարկայական խմբակներում ներգրավվում են ըստ ցանկության. շատ անգամ մասնակցում են միայն բարձր առաջադիմությամբ ուսանողները: Առարկայական մոդուլներում առակա չէ հետազոտական/վերլուծական աշխատանքի գնահատման համակարգ:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ, ուսանողների մոտ ձևավորվում է վերլուծական և հետազոտական կարողություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի զարգացման հնգամյա ծրագրի կարևոր հիմնախնդիրներից է ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ նյութատեխնիկական պայմաններ, արդի սարքավորումներով և դիտողական պարագաներով ուսումնական և լաբորատոր բազա, ժամանակի պահանջներին համահունչ գրադարանային ֆոնդ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ լսարանները և լաբորատորիաները հագեցված չեն արդի սարքավորումներով, մուլյաժներով և համապատասխան համակարգչային տեխնիկայով և առանց լրացուցիչ խոշոր ֆինանսական միջոցների ներդրման նախատեսված գործողությունները անիրատեսական են:

Քոլեջը պարբերաբար որոշ սահմանափակ միջոցներ է հատկացնում գույքի և նյութատեխնիկական բազայի համալրման համար.պարբերաբար իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվում որոշ անհրաժեշտ նյութեր, համալրվում է գրադարանային ֆոնդը:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարումը իրականացվում է տարեկան կտրվածքով բյուջեի նախահաշվի պատրաստման և տարեվերջին նախահաշվի տարեկան կատարողականի ներկայացման միջոցով: Քոլեջի կանոնադրությամբ՝ ֆինանսավորումը կատարվում է ՀՀ բյուջեից և սեփական միջոցներից, որոնք գոյանում են ուսման վճարներից: Նվազագույն աշխատավարձի փոփոխության հետ կապված կատարվել է դասաժամի վճարի որոշ բարձրացում: Ըստ ներկայացված տվյալների, բյուջեից ստացված մուտքերի և ուսման վճարների մոտ 90%ը ծախսվում է աշխատավարձի վրա:

Քոլեջում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար ֆինանսական միջոցները կառավարելու և ըստ նպատակների բաշխելու համար հիմք են հանդիսանում կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքը, կառավարության որոշումները և այլ իրավակատարումները, վճարովի համակարգում սովորող ուսանողների և քոլեջի միջև կնքած պայմանագրերը: Սակայն առկա է գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմների անկատարություն:

2013 թվականից քոլեջում գործում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, որով իրականացնում է փաստաթղթաշրջանառության ՀՀ ԿԳՄՄՆ-ի հետ: Սակայն բացակայում է ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: ՄՈՒՀ-ը 2017 թվականին ձեռք է բերել Հաշվապահական հաշվառման ավտոմատացված ՀԾ հաշվապահ-6 ծրագիրը, որը ամեն տարի թարմացվում է, և տվյալ համակարգով աշխատելու նպատակով իրականացվել է հաշվապահական բաժնի աշխատակցի վերապատրաստում: Քոլեջն օգտագործում է ֆինասական հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ: Փաստաթղթերի ընդունումն ու փոխանցումը իրականացնում է նաև քոլեջի էլեկտրոնային հասցեի (bujqolej@rambler.ru) միջոցով: Քոլեջում առկա է ինտերնետային կապ և համակարգչային սենյակ, որը վերջերս համալրվել է 4 նոր համակարգիչներով: Քոլեջի ստորաբաժանումների գործավարության կազմակերպման և վարման համար պատասխանատու է ստորաբաժանման պատասխանատուն. քոլեջի ամբողջ պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթավորումը գրանցվում է մատյանների մեջ:

Քոլեջի տարածքում ներքին հակահրդեհային անվտանգության պահպանման համար տեղադրված են կրակմարիչներ, հակահրդեհային վահանակներ, միջանցքներում, բոլոր կաբինետ-լաբորատորիաներում առկա են տարհանման սխեմաներ: Առկա է նաև քաղաքացիական պաշտպանության շտաբ, որն իրականացնում է ուսանողների և աշխատակիցների պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում:

ՄՈՒՀ-ում առկա չէ կենտրոնական ջեռուցման համակարգ: Որոշ լսարաններում առկա են ծխատարով գազի ջեռուցման հնամաշ վառարաններ:

Մատյաններում համապատասխան գրառումներով, ուսանողների անանուն հարցումների միջոցով, իրականացվում է կաբինետ-լաբորատորիաների, համակարգչային լսարանների, անհրաժեշտ սարքավորումների, գրադարանների ծառայությունների հասանելիության, կիրառելիության և արդյունավետության գնահատումները: Հարցումները ցույց են տալիս, որ ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսները հասանելի են:

Քոլեջը խիստ կարիք ունի լրացուցիչ միջոցների ներգրավման.քոլեջի ղեկավարությունը շենքի վերանորոգման ֆինանավորման համար դիմել է ԿԳՄՍՆ, ՀՕՖ, սակայն դեռևս հարցին լուծում չի տրվել: Ղեկավարությունը նախատեսում է առաջիկայում ձեռնարկել և իրականացնել դրամաշնորհային ծրագրեր, սակայն այս ուղղությամբ դեռևս որևիցե գործողություններ չեն կատարվել:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը գիտակցում է ռեսուրսների արդիականության ապահովման խնդիրը և փորձում է դրամաշնորհներին դիմելու միջոցով լուծել այս հարցը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ ռեսուրսների արդիականացման խնդիրը դեռևս չի լուծվել, իսկ քոլեջի պրոակտիվ քայլերը լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռբերման համար կնպաստեն ՄԿԾ-ներին համապատասխան արդի և կիրառական սարքավորումների համալրմանը:

Չնայած նրան, որ քոլեջը իր հնարավորության սահմաններում իրականացնում է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, սակայն հիմնովին վերանորոգման կարիք ունի ամբողջ շենքը: Սուղ ֆինանսական ռեսուրսների պատճառով, քոլեջը դեռևս չի լուծել շենքի միասնական ջեռուցման հարցը: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ լաբորատորիաներում որոշ սարքավորումները ծառայում են որպես դիդակտիկ նյութ՝ արդիականությունը կորցնելու պատճառով: Քոլեջը ունի սանհանգույցների, ճաշարանի և լսարանների վերանորոգման, լսարանային գույքի, դահլիճի բարեկարգման, ժամանակակից համակարգիչներով համակարգչային կաբինետների և տարական և ժամանակակից սարքավորումներով լաբորատորիաների վերազինման կարիք: Քոլեջի ֆինանսական խնդիրները կապված են նաև ուսանողների թվի նվազման հետ: Ֆինանսական միջոցների պլանավորման հիմքում դրված չէ առանձին ստորաբաժանումների կարիքների գնահատման գործընթացը: Ուսանողները և դասախոսական կազմը սահմանափակ են ներգրավված տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման աշխատանքներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների համար չկա ապահոված համապատասխան միջավայր դասապրոցեսը ժամանակակից մեթոդներով իրականացնելու համար, ինչը կարող է էականորեն խոչընդոտել համապատասխան ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը:

Դրական է, որ լաբորատորիաներում առկա են անատոմիական հարթաքանդակներ, ֆորմալինի մեջ դրված բազմաթիվ պրեպարատներ, սակայն լաբորատորիաները արդիական չեն, նյութերը հին են, մուլյաժները՝ սակավաթիվ և հնամաշ: Քոլեջի շրջանավարտը մուլյաժների օգնությամբ պարտավոր է բացարձակ տիրապետել որոշ հմտությունների, որը չի կարող ստանալ հիվանդանոցներում պրակտիկաների ընթացքում: Առկա ռեսուրսային բազան չի բավարարում մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Բացակայում է էլեկտրոնային գրադարանը, և ներկայիս գրադարանը նույնպես հագեցված չէ արդիական գրականությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ, այնուամենայնիվ, առկա են լաբորատորիաներ, որոնք որոշակի հագեցվածություն ունեն, և որոնց վերազինման համար գնվում են որոշ նոր նյութեր. օրինակ, ատամնատեխնիկական գործ մասնագիտության համար պարբերաբար ձեռք են բերվում նյութեր, կամ դեղագործության լաբորատորիան, որտեղ դեղապատրաստումներ են

կատարվում: Սակայն հարկ է նշել, որ ռեսուրսներով վերազինման մոտեցումը ինստիտուցիոնալ բնույթ չի կրում: Բնագիտական առարկաների դասավանդման համար լաբորատորիաները ևս կարիք ունեն լաբորատոր տարական պարագաներով և նյութերով հագեցման, ինչպիսիք են նոր կշեռքներ, մագնիսական խառնիչներ, ավտոմատ պիպետներ, pH մետր և այլն:

Պետք է նշել, որ այնուամենայնիվ, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կողմից կիրառվող լրացուցիչ մոտեցումների, ուսանողների պատրաստած պաստառների, բժշկական հիմնարկների բազայից՝ ռեսուրսներից ազատորեն օգտվելու հնարավորությունը նպաստում է քոլեջի ՄԿԾ-ների վերջնարդյունքերի ձեռքբերմանը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԴՊԲՔ-ը չունի ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ արդիական ուսումնական միջավայր, չի տրամադրում համապատասխան ֆինանսական ռեսուրսներ անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու և գործարկելու համար, բացակայում է ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ապահովելու համար համապատասխան քաղաքականություն, մասամբ է ապահոված անվտանգության պայմաններով, փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջը չի համապատասխանում չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ՄՈՒՀ-ն ունի արտաքին և ներքին հաշվետվողականություն, սակայն չունի միասնական հաշվետվողականության սահմանված կարգ: ՄՈՒՀ-ի ստորաբաժանումները կիսամյակների և տարվա վերջում հաշվետվություններ են ներկայացնում իրենց աշխատանքը համակարգող վարչական մարմնին, որն էլ իր հերթին՝ տնօրենին: ՄՈՒՀ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ ՄՈՒՀ-ի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), տարեկան 1 անգամ լսում և գնահատում է տնօրենի հաշվետվությունը, որը հանդիսանում է հիմնական հաշվետու փաստաթուղթ: Ըստ ինքնավերլուծության, այսպիսի հաշվետվողականությունը թույլ է տալիս բացահայտել տարբեր օղակներում առկա խնդիրները և դրանց տալ լուծումներ (օր. ամբիոններում կատարված դասալսումների արդյունքում բացահայտված խնդիրները քննարկվում և լուծում են ստանում ամբիոնի վարիչի, մեթոդիստի կամ ուսումնական գծով փոխտնօրենի կողմից), կատարել նպատակային փոփոխություններ կառավարման բարելավման նպատակով: Փորձագիտական խմբի դիտարկումներից պարզ դարձավ, որ հաշվետվությունները միայն արձանագրում են կատարված աշխատանքները և չունեն վերլուծական բնույթ: ՄՈՒՀ-ում գործող հաշվետվողականության համակարգը հիերարխիկ է.

ամբիոնի վարիչները, պրակտիկայի վարիչը, մեթոդիստը հաշվետու են ուսումնական գծով փոխտնօրենին, իսկ ուսգծով փոխտնօրենը՝ տնօրենին։

ՄՈՒՀ-ն ունի նաև արտաքին հաշվետվողականության համակարգ։ Արտաքին շահակիցների հաշվետվողականության մեխանիզմներից է ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը (օր.՝ Կարիերայի պատասխանատուն ամեն տարի ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացնում շրջանավարտների տեղաշարժի վերաբերյալ հաշվետվություն)։ Էլեկտրոնային կայքէջի բացակայության պատճառով հաշվետվությունները չեն հրապարակվում։

ՄՈՒՀ-ում չեն իրականացվում գործող հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ։ ՄՈՒՀ-ն ունի հասարակության հետ որոշակի կապեր, որը սակայն համակարգված բնույթ չի կրում։ Արտաքին շահակիցների (‹‹Իռ-Վինգ›› ՍՊԸ-ի բժիշկներ, դեղատների ղեկավարներ, քոլեջի հետ համագործակցող դպրոցի տնօրեններ) հետ հանդիպման արդյունքում պարզվեց, որ վերջիններս տեղյակ են ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացներին, կարևորում են ՄՈՒՀ-ի դերը տարածաշրջանի կրթական և առողջապահական ոլորտներում։

ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը իրականացվում է՝ սոցիալական ցանցերի (Facebook-յան էջ), Դիլիջանի քաղաքապետարանի մամուլում տպագրվող հայտարարությունների, կարիերայի կողմնորոշման և ուղղորդման պատասխանատուի, դասախոսների և ուսանողների տարածաշրջանի դպրոցներ այցելությունների (բանավոր զրույցներ), միասնական սոցիալական ծառայության հետ համագործակցության միջոցով։ Դիմորդներ ներգրավելու համար ՄՈՒՀ-ը ցուցավահանակների վրա փակցնում է հայտարարություններ, տպագրում՝ տեղեկատու բուկլետներ։

ՄՈՒՀ-ի հասանելիությունը հասարակությանը ապահովվում է նաև ներքին և արտաքին շահակիցների միջոցով, որոնք ընդգրկված են ՄՈՒՀ-ի տարբեր կառույցներում (դպրոցի տնօրեններ, գործատուներ) և գործընթացներում (ուսանողներ, դասախոսներ) ։ Հասարակության կողմից ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ հետադարձ կապը իրականացվում է շրջանավարտների, գործատուների միջոցով (հարցաթերթեր, պրակտիկ աշխատող բժիշկ-դասախոսներ, անձնական շփումներ) ։ Հասարակության կողմից ստացվող արձագանքները հիմնականում հավաքագրվում են կարիերայի պատասխանատուի կողմից, որն իր գործունեությունը սկսել է 2018թ-ից։

ՄՈՒՀ-ում չկան հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, էլեկտրոնային կայքը դեռևս պատրաստ չէ, իսկ Facebook-յան էջը չի նպաստում հասարակության հետ կայուն և արդյունավետ հետադարձ կապի ձևավորմանը։

ՄՈՒՀ-ը հասարակությանը գիտելիքների փոխանցումն իրականացնում է կազմակերպվող միջոցառումների (Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված միջոցառում ‹‹Աղետների դիմակայման օր›› խորագրով), բաց դասերի (գործնական պարապմունք՝ ‹‹Տարհանման իրականացում›› թեմայով) միջոցով, ինչպես նաև դասախոսները ժամանակ առ ժամանակ աշխատում են այլ հաստատություններում և փոխանցում իրենց գիտելիքները հասարակությանը։ 44 օրյա պատերազմի ընթացքում ՄՈՒՀ-ի ուսանողները կամավորական հիմունքներով իրականացրել են առաջին բուժօգնություն, փոխանցել իրենց

գիտելիքները հասարակությանը: ՄՈՒՀ-ի կողմից հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն չի կատարվել:

ՄՈՒՀ-ը մարզի շրջանակներում մշակել է ծրագիր՝ 10 տարի ու ավել աշխատող և վերապատրաստման կարիք ունեցող մասնագետների շարունակական կրթությունն ապահովելու նպատակով, սակայն Covid-19-ի համավարակի պատճառով այն հետաձգվել է:

Ըստ փորձագիտական խնբի դիտարկումների ՄՈՒՀ-ն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ, սակայն դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ և գործիքներ դեռևս ձևավորված չեն:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում ստեղծված ներկայացուցչական մարմինները (խորհուրդներ) հստակ պարբերեկանությամբ հաշվետվություն են ներկայացնում քոլեջի տնօրենին, և վերջինս հաշվետվություն է ներկայացնում քոլեջի խորհրդին, ինչը նպաստում է հաշվետվողականության կանոնակարգված և համակարգային մոտեցմանը:

Հաշվետվությունները փաստերի արձանագրությունների ձևաչափով են ներկայացված, բացակայում են եզրահանգումները, հայտնաբերված խնդիրների վերացմանն ուղղված առաջարկները, վերլուծությունները, անդրադարձ չի կատարվում նախորդ տարիների հաշվետվությունից վերհանված խնդրահարույց հարցերին, սակայն դրանց միջոցով պարզ է դառնում կարճաժամկետ պլանների իրագործումը:

ՄՈՒՀ-ում գործում են տեղեկատվության տարածման որոշակի մեխանիզմներ՝ Facebook-յան էջ, տպագիր մամուլ, այցելություններ տարածաշրջանի դպրոցներ, որոնցով ապահովվում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը: Առկա է հետադարձ կապ շրջանավարտների և գործատուների հետ, սակայն դրանք համակարգված բնույթ չեն կրում: Այս հանգամանքը խոչընդոտում է շահակիցների կարիքների լիարժեք վերհանմանը: ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների փոխանցման որոշ մեխանիզմներ, սակայն դրանց արդյունավետության գնահատման գործիքները բացակայում են:

Փորձագիտական խնբի դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում չկան հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, Facebook-յան էջի արդյունավետությունը գնահատված չէ, էլեկտրոնային կայքի բացակայությունը հնարավորություն չի տալիս հասարակության կողմից արձագանքներ ստանալու և արտաքին շահակիցների կարիքներին արձագանքելու համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը կայուն պարբերականությամբ ներկայացնում է հաշվետվություններ արտաքին և ներքին շահակիցներին, ապահովում է հետադարձ կապ գործատուների և շրջանավարտների հետ, իրականացնում հասարակության հետ կապերին և գիտելիքների փոխանցմանը նպաստող որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գնահատում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր:

ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը: Դեռևս քոլեջի առաջին զարգացման ծրագրով միջազգայնացումը և արտաքին կապերի զարգացումը սահմանվել էր որպես ռազմավարական նպատակ: Հաջորդիվ ստեղծված 2 զարգացման ծրագրերով ՄՈՒՀ-ը ևս նախատեսել է ստեղծել միջազգային արդյունավետ համագործակցության զարգացման մեխանիզմներ այլ երկրների նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու նպատակով: Սակայն այդ ուղղությամբ քաղաքականություն և ընթացակարգեր դեռևս մշակված չեն, սահմանված չեն առաջնահերթությունները, չեն իրականացվել համապատասխան գործողություններ և չկա գործընթացը համակարգող պատասխանատու անձ:

ՄՈՒՀ-ի ղեկավարությունն ըստ ինքնավերլուծության կարևորում է միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման անհրաժեշտությունը, սակայն միջազգայնացմանն ուղղված աշխատանքներ դեռևս չեն իրականացվում:

ՄՈՒՀ-ում արտաքին կապերի համակարգման գործընթացները իրականացնում է տնօրենը՝ գործընկերներ ներգրավելու միջոցով (ուսումնական, նախաավարտական պրակտիկաներ), ինչպես նաև կարիերայի կենտրոնը՝ համագործակցելով գործատուների, տարածքային զբաղվածության կենտրոնի, տարածաշրջանի դպրոցների (Դիլիջանի թիվ 4 դպրոց) հետ դիմորդներ ներգրավելու և շրջանավարտների զբաղվածությունն ապահովելու համար:

Կարերայի կենտրոնը ստեղծվել է 2018թ-ին, այն ունի մշակված կանոնակարգ, գործառույթներ, աշխատանքային պլան և հաշվետու է ՄՈՒՀ-ի տնօրենին և ԿԳՄՍ նախարարությանը:

ՄՈՒՀ-ն ունի կնքած համագործակցության պայմանագրեր տարածաշրջանի բժշկական հաստատությունների՝ ‹‹Իռ-Վինգ›› ՍՊԸ-ի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի ԲԿ-ների, դեղատների, ատամնաբուժարանների, գեղեցկության սրահի հետ, որոնց շրջանակներում ուսանողներն իրենց պրակտիկ պարապմունքներն անց են կացնում համապատասխան բժշկական հաստատություններում: Առավել բանիմաց, ակտիվ ուսանողները ընտրվում են դրանց կողմից և կրթության ավարտից հետո հնարավորություն ստանում աշխատել տվյալ հաստատություններում: Այցի ընթացքում փորձագիտական խումբը հանդիպումներ ունեցավ վերոնշյալ մի շարք կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը չի իրականացնում ՀՀ-ում գործող միջազգային կառույցների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներ:

Կրթության շարունակականության հետ կապված՝ ՄՈՒՀ-ը կնքել է համագործակցության պայմանագրեր ‹‹Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի›› և ‹‹Հայկական բժշկական ինստիտուտի›› հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ի լավագույն շրջանավարտներին կրթությունը շարունակել վերոնշյալ ԲՈՒՀ-երում: ‹‹Հայկական բժշկական ինստիտուտի›› հետ կնքած պայմանագրում նշվում է դասախոսների շարժունության մասին, որը չի իրագործվում:

Համագործակցությունը բժշկական ուսումնական հաստատությունների հետ թույլ է:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների մեծ մասի ռուսերենի և անգլերենի իմացության մակարդակը ցածր է: Դասախոսների հիմնական մասը տիրապետում է ռուսերենին, իսկ անգլերենի և այլ օտար լեզուների իմացության մակարդակը ցածր է: ՄՈՒՀ-ում ուսանողների և դասախոսների օտար լեզուների իմացության կատարելագործման համար հստակ մեխանիզմներ չկան: Բացակայում են փաստեր դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունության վերաբերյալ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ՄՈՒՀ-ը համագործակցում է տարածաշրջանի որոշ կազմակերպությունների, դեղատների և ԲԿ-ների հետ, որը նպաստում է ուսանողների կողմից արդի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գործնական հմտությունների ձեռքբերմանը և կարիերայի հետագա առաջխաղացմանը:

Դրական է դիտվում նաև Կարերայի կենտրոնի ակտիվ գործունեությունը տարածքային զբաղվածության կենտրոնի, գործատուների հետ, որի արդյունքում շրջանավարտները հնարավորություն են ունենում աշխատելու մասնագիտությամբ:

ԴՊԲՔ-ն համագործացում է ՀՀ որոշ ԲՈՒՀ-երի հետ՝ կրթությունը շարունակելու հնարավորություն ընձեռնելով ՄՈՒՀ-ի բարձր առաջադիմությամբ սովորող ուսանողներին:

Թեև ՄՈՒՀ-ն իր զարգացման ծրագրում կարևորում է արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը, սակայն փորձագիտական խումբը ռիսկային է համարում դրան նպաստող քայլերի և համապատասխան գործողությունների բացակայությունը:

Միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման գործընթացի համար խոչընդոտ է հանդիսանում նաև այն, որ ՄՈՒՀ-ն այդ նպատակների իրագործման համար ռեսուրսներ /մարդկային և ֆինանսական/ չի հատկացնում:

Մտահոգիչ է նաև այն, որ ԴՊԲՔ-ն նախաձեռնողական մոտեցում չի դրսևորում ՀՀ-ում մասնաճյուղեր և կառույցներ ունեցող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու համար, որը դրական գործոն կհանդիսանար ՄՈՒՀ-ի արտաքին կապերի հաստատմանն ուղղված աշխատանքներում, դասախոսների շարժունության ապահովման հարցում, ինչպես նաև լրացուցիչ ռեսուրսների ներգրավման գործընթացում:

ՄՈՒՀ-ը կարևորում է դասախոսական կազմի և ուսանողների օտար լեզուների իմացությունը, սակայն դրանց կատարելագործմանն ուղղված հստակ մեխանիզմներ դեռևս չկան: Փորձագիտական խումբը գտնում է, որ օտար լեզուների իմացության ցածր մակարդակը հնարավորություն չի ընձեռնում մասնագիտական դասընթացների վարման և ՄԿԾ-երի շրջանակներում ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման համար:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ԴՊԲՔ-ում չեն իրականացվում արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող գործողություններ, ՄՈՒՀ-ը չի տրամադրում ռեսուրսներ միջազգայնացմանն ուղղված աշխատանքների համար, բացակայում է ՀՀ-ում մասնաճյուղեր և կառույցներ ունեցող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու նախախաձեռնողականությունը, չի գործում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը միտված հստակ մեխանիզմներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ ԴՊԲՔ-ն չի բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Դիլիջանի պետական բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Ներկայացված ինքնավերլուծության համաձայն, 2021թ. ապրիլի 15-ից քոլեջում հրամանագրվել է որակի պատասխանատու, քոլեջը դեռևս չի մշակել որակի ապահովմանն ուղղված կանոնակարգեր և ընթացակարգեր: Քոլեջը դեռևս չունի որակի ապահովման քաղաքականություն և տարեկան գործունեության պլան: Թեև մինչ որակի ապահովման պատասխանատուի հրամանագրումը, քոլեջում չի եղել որակի ապահովումն իրականացնող ենթակառուցվածք և/կամ պատասխանատու անձ, այնուամենայնիվ, քոլեջում մշակվել են քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատմանն ուղղված փաստաթղթեր, մասնավորապես.

1. Քոլեջի շահակիցների կարիքների գնահատման կանոնակարգ
2. Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն
3. Կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերհանման կանոնակարգ:

Քոլեջի շահակիցների կարիքների գնահատման կանոնակարգում ներառված են միայն ուսանողների հարցումների, ուսանողների կողմից դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման և դիմորդների կարիքների գնահատման հարցաթերթեր: Կանոնակարգում թեև հստակ սահմանված են արտաքին և ներքին շահակիցները, բայց չեն ներկայացվում շահակիցների կարիքների գնահատման գործիքակազմը, կարիքների գնահատման համար պատախանատու ստորաբաժանումները/անձինք, գործընթացի կազմակերպման և արդյունքում ստացված տվյալների վերլուծության մեթոդաբանությունը: Վերոնշյալ քաղաքականությամբ և ներկայացված այլ հիմնարար փաստաթղթով չեն սահմանվում նաև շահակիցների կարիքների գնահատման գործընթացի արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմները և դրա համար պատասխանատու միավորը, ինչպես նաև չի ներկայացվում՝ ստացված տվյալներն ինչպես և ինչ մեխանիզմով են ազդում որոշումների կայացման վրա: Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության մեջ ներառված են նույն հարցաշարերը, որոնք առկա էին քոլեջի շահակիցների կարիքների գնահատման կանոնակարգում (բացառությամբ դիմորդների կարիքների գնահատման հարցաթերթի) :

Կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերհանման կանոնակարգով սահմանվում է, որ կրթական ծրագրերը վերանայվում են ուսումնական տարվա ընթացքում, համապատասխան առարկայական/ցիկլային հանձնաժողովի/ամբիոնի վարիչի կողմից, իսկ արդյունքները ներկայացվում են տնօրենի ուսումնամեթոդական աշխատանքների գծով տեղակալին և ուսումնամեթոդական խորհրդին՝ քննարկելու, առաջարկություններով հանդես գալու և

առաջարկվող միջոցառումներին հավանություն տալու նպատակով: Վերոնշյալ կանոնակարգով չեն սահմանվում կրթական ծրագրերի վերանայման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավման մեխանիզմները, գործընթացի արդյունքում ներկայացված առաջարկների իրագործման, իրականացված փոփոխությունների արդյունքների գնահատման գործիքակազմը և պատասխանատու ստորաբաժանումները/անձինք:

Դեռևս հստակեցված չէ որակի ապահովման պատասխանատուի գործունեության շրջանակը: Սահմանված չեն նաև որակի ապահովման պատասխանատուի հաշվետվողականության մեխանիզմները: Որակի ապահովման պատասխանատուն միևնույն ժամանակ հանդիսանում է քոլեջի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, ով ներգրավված է կառավարման և խորհրդակցական մարմիններում: Վերջին երեք տարիների ֆինանսական ռեսուրսների կառավարման փաստաթղթերը (%-ով ամբողջ բյուջեի նկատմամբ) ցույց են տալիս, որ որակի ապահովման նպատակով ֆինանսական ռեսուրսներ չեն տրամադրվել: Քոլեջի աշխատակիցները չեն մասնակցել որակի ապահովման կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների:

Վերոնշյալ կանոնակարգերում և քոլեջի հիմնարար այլ փաստաթղթերով սահմանվում են քոլեջի հիմնական արտաքին և ներքին շահակիցները, սակայն դեռևս մշակված չէ արտաքին և ներքին շահակիցների կարիքների գնահատման (բացառությամբ ուսանողների) և որակի ապահովման գործընթացներում նրանց ներգրավման հստակ գործիքակազմ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ մշակման փուլում է գտնվում արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացներին ներգրավելու ընթացակարգը: Քոլեջում դեռևս մշակված չէ դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման քաղաքականություն:

Քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, իրականացված գործընթացների արդյունավետության գնահատում երբևիցէ չի իրականացվել և դեռևս մշակված չեն գործընթացների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի արտաքին և ներքին շահակիցները և մասնավորապես կառավարման համակարգը կարևորում է ՈՆԱ համակարգի առկայությունը և դրա զարգացումը:

Քոլեջի ստերաբաժանումները ներկայացնում են տարեկան հաշվետվություններ: Սակայն, քոլեջում երբևիցէ չեն իրականացվել ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման, կառուցվածքի վերլուծության աշխատանքներ, չեն կազմվել ինքնավերլուծություններ:

Քոլեջի պաշտոնական կայքի բացակայության պատճառով քոլեջում իրականացվող և իրականացվելիք գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, իրականացված վերլուծությունները, մշակված հաշվետվությունները հասանելի չեն քոլեջի ներքին և արտաքին շահակիցներին:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում որակի ապահովման համակարգի ներդրմանն ուղղված քայլերը:

Թեև քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման նախնական փուլում է գտնվում, այնուամենայնիվ, տարբեր ստորաբաժանումների կողմից որակի ապահովման որոշ գործընթացներ իրականացվել են: Սակայն որակի ապահովման քաղաքականության

բացակայության պայմաններում, գործընթացները չեն պլանավորվել և համակարգվել որևէ ստորաբաժանման կողմից և ռազմավարական զարգացման համատեքստում չեն վերլուծվել, հետևաբար, չեն մշակվել նաև բարելավմանն ուղղված առաջարկներ, արդյունքում ազդեցություն չեն ունեցել քոլեջի կրթական և կառավարման գործընթացների վրա և չեն նպաստել որակի ապահովման մշակույթի ձևավորմանը:

Թեև փորձագիտական այցի ընթացքում, կառավարող օղակը կարևորեց քոլեջում որակի ապահովման համակարգի ստեղծումը և բարձր գնահատեց որակի պատասխանատուի կատարած աշխատանքը, այսուհանդերձ, քոլեջը չի նախատեսում ֆինանսական և նյութական ռեսուրսներ տրամադրել որակի ապահովման ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուին ընտրելիս մշակված չի եղել համապատասխան պաշտոնի անձնագիր, հետևաբար, փորձագիտական խմբի դիտարկմամբ, քոլեջի կառավարման համակարգը նախապես չի ուրվագծել այն կարողությունների և հմտությունների շրջանակը, որն անհրաժեշտ է համապատասխան պաշտոնը զբաղեցնելու համար, հետևաբար, ՈԱ պատասխանատուի գործունեությունը կրում է ոչ համակարգված բնույթ, հիմնավորված չեն ՈԱ պատասխանուտի հաշվետվողականության մեխանիզմները: Սա էականորեն խոչընդոտում է որակի ապահովման մշակույթի ստեղծմանը և դեռևս չի նպաստում քոլեջի արդյունավետ ռազմավարական կառավարմանը:

Որակի ապահովման պատասխանատուն միևնույն ժամանակ հանդիսանում է կառավարման և ներկայացուցչական մարմինների անդամ, քանի որ զբաղեցնում է տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի պաշտոնը: Ուստի այս պարագայում ոչ միայն խախտվում է որակի ապահովման համակարգի ինքնավարության ապահովման կարևոր սկզբունքը, այլև անհնարին է դառնում քոլեջում իրականացվող գործընթացների օբյեկտիվ գնահատումը, քանի որ մի շարք գործընթացների անմիջական պատասխանատուն հանդիսանում է փոխտնօրենը: Նաև սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ քոլեջում դեռևս հստակեցված չեն որակի ապահովման հաշվետվողականության մեխանիզմները և տեղը ընդհանուր կառուցվածքային հիերարխիայում:

Քոլեջում մեծ թվով բժիշկ դասախոսների առկայությամբ է հիմնավորվում արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին, սակայն արտաքին շահակիցների կողմից ներկայացվող առաջարկները, դիտարկումները ոչ բոլոր դեպքերում են փաստաթղթավորվում և վերլուծության ենթարկվում: Որակի ապահովման գործընթացներին արտաքին շահակիցների մասնակցությունը խթանող ընթացակարգ և միջոցառումների համակարգ ևս մշակված չէ: Ընդհանուր առմամբ արտաքին շահակիցների հետ փոխգործակցությունը ինստիտուցիոնալիզացված չէ և ընդգծված չափով կրում է անձնավորված բնույթ, արդյունքում համապատասխան անձերի փոփոխությունը կարող է հանգեցնել արտաքին շահակիցների հետ համագործակցության վատթարացման և արդյունավետության անկման:

Քոլեջում թեև իրականացվել են որակի ապահովմանն ուղղված գործընթացներ, սակայն դրանց արդյունավետության գնահատման, իրականացված քաղաքականության վերանայման աշխատանքներ չեն կատարվել, ինչը պայմանավորված է ինչպես

համապատասխան մեխանիզմների և գործիքակազմի, այնպես էլ համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայությամբ:

Քոլեջում իրականացվող որակի ապահովման գործընթացները չեն լուսաբանվում: Թեև որակի ապահովմանն ուղղված որոշ աշխատանքներ (մասնավորապես՝ հարցումներ) իրականացվել են, սակայն դրանց արդյունքները որևէ կերպ հասանելի չեն քոլեջի ներքին և արտաքին շահակիցներին, հետևաբար չի գործում հարցումների արդյունքների, դրանց ընթացքում բացահայտված խնդիրների վերաբերյալ հանրային վերահսկողություն և այդ արդյունքները չեն ազդել ստորաբաժանումների գործունեության վրա, ինչպես նաև իրենց արտացոլումը չեն գտել գործընթացների հետագա բարելավման վրա:

Եզրահանգում:

Հաշվի առնելով որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի, աշխատանքային պլանների բացակայությունը, որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարար լինելը, որակի ապահովման գործընթացների մշտադիտարկման և գնահատման գործիքակազմի բացակայությունը, ինչպես նաև որակի ապահովման պատասխանատուի ներգրավվածությունը կառավարման համակարգում և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի որակի ապահովման համակարգը անկատար է և բավարար հենք չի ստեղծում ռազմավարական կառավարման համար և բավարար չափով ներուժ չունի հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը նպաստելու համար:

Եզրակացություն:

ԴՊԲՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Աննա Փոլադյան

13.01.2022

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աննա Փոլադյան-1994 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը: 1994-96 թթ. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում եղել է փորձնակ-հետազոտող, նույն թվականին եղել է ավագ լաբորանտ: Այնուհետև 1996–1998 թթ. եղել է կրտսեր գիտաշխատող, 2000 թթ.-ին՝ գիտաշխատող, հետագայում նաև 2000-2018 թթ. ավագ գիտաշխատող: 2000 թ.-ից կենսաբանական գիտությունների թեկնածու է, իսկ 2021 թ.-ից՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, 2016-2017 թթ. ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում անհատ խորհրդատու: 2012-ից առ այսօր Երևանի պետական համալսարանում Կենսաբանության ֆակուլտետ, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում դոցենտ, իսկ 2021 թ-ից՝ սույն ամբիոնի վարիչ: Մասնակցել է փոխանակման ծրագրերի և մի շարք գիտաժողովների: Հեղինակ է մոտ 40 հրատարակված գիտական հոդվածների, գրքերի և ուսումնական ձեռնարկների: Մասնակցել է մոտ 12 դրամաշնորհների: Պարգևատրվել է մի շարք պարգևներով:

Անի Հակոբյան- 2021թ. ավարտել է ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը, ասպիրանտուրա: 2020թ.-ից առ այսօր աշխատում է ՃՇՀԱՀ կրթության որակի ապահովման կենտրոնում որպես ավագ մասնագետ: 2021 թ.-ից առ այսօր հանդիսանում է Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվող GeoTAK նախագծի որակի ապահովման հայաստանյան պատասխանատու: ՃՇՀԱՀ քաղաքաշինության ամբիոնի «Աշխարհատեղեկատվական համակարգերի (GIS) հիմունքներ» դասընթացի դասախոս: «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր, բնագիտության և աշխարհագրության ուսուցչուհի:

Անահիտ Մարտիրոսյան- 1996 թ.-ին ավարտել է Առողջապահության ազգային ինստիտուտը: Ներկայումս աշխատում է թիվ 20 Պոլիկլինիկա առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունում, մանկաբարձության և գինեկոլոգիայի բաժանմունքում: 1998-2021 թթ. աշխատել է Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջում: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների:

Սպարտակ Սիմոնյան- Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջի ուսանող: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	14.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Մեկնում Երևանից Դիլիջան	12:00	14:00	120 րոպե
2	Ռեսուրսների դիտարկում	16:00	17:00	60 րոպե
	15.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում ԴՊԲՔ տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:00	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում շրջանավարտների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

	16.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների և մեթոդիստի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ուսանողների (10-12 հոգի) հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:20	16:00	40 րոպե
7	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /Ուսումնական մասի վարիչ, կարիերայի կենտրոնի ղեկավար, գրադարանավար, հաշվապահ, գնումների համակարգող, կադրերի բաժնի տեսուչ/	16:10	17:10	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

	17.11.2021թ.		***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում «Քույրական գործ», կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	«Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Քույրական գործ», կրթական ծրագրերի դասախոսների հետ	«Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե

3	Հանդիպում «Քույրական գործ», կրթական ծրագրերի ուսանողների հետ	«Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրերի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ		14:20	15:20	60 րոպե
6	Բաց հանդիպում		15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում		17:00	19:00	120 րոպե

	18.11.2021 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ԴՊԲՔ ղեկավար կազմի հետ	10:35	11:00	25 րոպե
3	Վերադարձ Դիլջանից Երևան	12:00	14:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափա նիշ
1.	2012-2017 թթ. Ռազմավարական ծրագիր	1
2.	Աշխատաշուկայի կարիքների գնահատման հաշվետվություն	1
3.	Գործատուների բավարարվածության գնահատման վերլուծություն	1
4.	Կարիերայի ստորաբաժանման կատարողականի հաշվետվություն	1
5.	Շահակիցների կարիքների գնահատման ընթացակարգ	1
6.	Լրացուցիչ մասնագիտական խորհրդատվական պարապմունքների հիմքեր	1
7.	Գործատուների կարիքների գնահատման/ պահանջների վերլուծության վերջին հաշվետվություն	1
8.	Կառավարման խորհրդի արձանագրություններ	2
9.	Տնօրինական խորհրդի կազմ	2
10.	Ֆինանսական ռեսուրսների պլանավորում, ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատման վերաբերյալ հաշվետվություն/վերլուծություն	2
11.	Աշխատանքային պլաններ	2
12.	Տնօերնի կանոնակարգ	2
13.	Շահակիցների բավարարվածության գնահատման վերլուծություն	2
14.	Պետական որակավորման հանձնաժողովի աշխատանքների հաշվետվություն	2
15.	Թափուր աշխատատեղերի զբաղեցման արձանագրություններ	2
16.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ և հաշվետվություններ (վերջին երեք տարիների համար)	3
17.	Ամբիոնների առարկաների ցանկ	3
18.	Նիստերի արձանագրություններ /վերջին երեք տարիների համար	3
	Դասացուցակներ	3
20.	Պրակտիկայի մատյաններ /յուրաքանչյուր կուրսից՝ մեկական	3
21.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից՝ մեկական/	3

22.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ	3
23.	Պրակտիկաների ծրագրեր, լրացրած օրագրեր, պրակտիկայի հաշվետվություններ / ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
24.	Հաստիքացուցակ	3
25.	Դասախոսների վերապատրաստման փաթեթներ /եզակի դեպքեր/	3
26.	Բաց դասերի վերաբերյալ հայտարարություններ	3
27.	Սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքների արձանագրու թյուններ	3
28.	Ուսման մեջ հետ մնացող ուսանողների հետ տարվող աշխատանքերի ժամանակացույց	3
29.	Ուսման վարձի փոխհատուցման և նպաստի տրամադրման կարգ	4
30.	Բուկլետներ	4
31.	Անանուն հարցման նմուշներ	4
32.	Կառավարման խորհրդի նիստերից քաղվածքներ, երբ քննարկվել են ուսանողների կողմից բարձրաձայնված խնդիրները:	4
33.	Խորհրդատվական ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հիմքեր	4
34.	Լրացուցիչ պարապմունքների իրականացման ժամանակացույց	4
35.	Ուսանողներին տրվող շնորհակալագրեր	4
36.	մասնագիտական թեստեր որոնք բացահայտում են անձի մասնագիտական ուղղվածությունը	4
37.	Դասախոսների ընտրության կարգը, ձևը և չափանիշները ներկայացնող փաստաթղթեր /որոշ դեպքեր/	5
38.	Ուսումնաօժանդակ կազմի պաշտոնի անձնագրեր	5
39.	Տնօրենի և դասախոսների պարգևատրման և նյութական խրախուսման կանոնակարգ	5
40.	Մասնագիտական ռեֆերատներ	6
41.	Առարկայական խմբակների և կազմակերպվող սեմինարների վերաբերյալ փաստաթղթեր	6
42.	Ֆինասական միջոցների ներգրավման ընթացակարգ	7
43.	Բյուջեի կատարողական	7

44.	Տարածաշրջանում գործող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև բժշկական հաստատությունների հետ համագործակցության վերաբերյալ հիմքեր	9
45.	Արտաքին շահակիցների կողմից շրջանավարտների աշխատանքի արդյունավետության և որակի գնահատման հարցաթերթ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Մարզադահլիճ
3. Գրադարան-ընթերցասրահ
4. Դասախոսական սենյակ
5. Համակարգչային լսարան
6. Վարչական անձնակազմի աշխատասենյակներ
7. Լաբորատորիաներ
8. Միջոցառումների դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ